

ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆ

28 մարտի 2011թ. N 242-Ա/Ք

Ղեկավարվելով ՀՀ կրթության և գիտության նախարարության կանոնադրության 14-րդ կետի դ/ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թվականի դեկտեմբերի 30-ի N 1806-Ա/Ք/ հրամանով հաստատված՝ «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրի» 16-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել «ՀՀ կրթության և գիտության նախարարության հաղորդակցության ռազմավարությունը (2011-2015թթ.)»՝ համաձայն հավելվածի:
2. Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը /պետ՝ Ա. Բաղդասարյան/, Զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչությանը /պետ՝ Ռ. Ստեփանյան/ 10-օրյա ժամկետում հաստատաման ներկայացնել «ՀՀ կրթության և գիտության նախարարության հաղորդակցության ռազմավարությունից (2011-2015թթ.)» բխող և ֆինանսական միջոցներ պահանջող գործողությունները՝ «Միջնաժամկետ ծախսային ծրագիր 2012-2014թթ.»-ում ներառելու նպատակով:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԱՇՈՏՅԱՆ

Հավելված

Հաստատում եմ՝

ՀՀ կրթության և գիտության նախարար

----- Ա.Աշոտյան

«----28---»մարտի- 2011թ. N 242-Ս/Ք հրաման



Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարություն

ՀՀ կրթության և գիտության նախարարության
Հաղորդակցության ռազմավարություն (2011-2015)



ՄԱԶԾ Հայաստանի գրասենյակի
«Մարդու իրավունքների կրթության խթանում Հայաստանում» ծրագրի աջակցությամբ

Երախտիքի խոսք

ՄԱԶԾ-ի՝ հաղորդակցության հարցերով առաքելություն իրականացնող թիմը ցանկանում է իր երախտագիտությունը հայտնել իրենց նպաստը բերած բոլոր այն անձանց, ովքեր համաձայնեցին մասնակցել հարցազրույցների կամ լրացնել հաղորդակցության գնահատման հարցաթերթիկը, եւ ովքեր օժանդակեցին այս զեկույցի պատրաստմանը: Մասնավորապես, շնորհակալ ենք Կրթության եւ գիտության նախարար մեծարգո պ-ն Արմեն Աշոտյանին՝ աջակցության, քաջալերանքի եւ փոխնախարարներ Արա Ավետիսյանի եւ Մանուկ Մկրտչյանի մասնակցության համար, ինչպես նաև առանձնահատուկ շնորհակալություն պետք է հայտնենք Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության ղեկավար պ-ն Արթուր Բաղդասարյանին և նրա անձնակազմին՝ ռազմավարության մշակման ընթացքում ցուցաբերած անգնահատելի ներդրման համար: Մենք նաև ցանկանում ենք երախտիքի խոսք ուղղել Կրթության եւ գիտության նախարարության բազմաթիվ փորձագետներին եւ պաշտոնյաներին, ինչպես նաև հայաստանյան այլ հաստատությունների եւ լրատվամիջոցների ներկայացուցիչների հասցեին, ովքեր պատրաստակամորեն մեզ հետ կիսեցին իրենց անձնական փորձն ու մոտեցումները: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության մշտական համակարգող եւ ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դաֆինա Գերչեւային եւ ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի թիմին, մասնավորապես՝ Ալլա Բակունցին եւ Մարինա Մալխասյանին, իրենց անգնահատելի աջակցության համար:

2010 թ. նոյեմբերի 15

Ալեքս Ստենդիշ (ՄԱԶԾ առաքելության ղեկավար)

Ծրագրերի ղեկավար

«Վերադարձը եւ վերաինտեգրումը Կոսովոյում» (ՎՎԿ)

ՄԱԶԾ Կոսովո

+386 49 455 728

alex.standish@undp.org

Բլայթ Ֆրեզր

Հաղորդակցության եւ քարոզչության պատասխանատու

Կարողությունների զարգացման ուղղություն

ՄԱԶԾ-ի Բրատիսլավայի տարածաշրջանային կենտրոն, Եվրոպայի եւ ԱՊՀ-ի տարածաշրջանային բյուրո (RBEC)

+421 259 337 273

blythe.fraser@undp.org

Ջորջ Հոջ

Հաղորդակցության ու ծրագրերի մշակման հարցերով խորհրդատու

ՄԱԶԾ Հայաստան

+374 77 848 629

george.hodge@undp.org

Վերապահում

Միավորված ազգերի կազմակերպության Ջարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) գլոբալ զարգացման հարցերով ՄԱԿ-ի ցանցն է, որը քարոզում է փոփոխություններ եւ երկրները շաղկապում գիտելիքին, փորձին եւ ռեսուրսներին՝ մարդկանց օգնելով կառուցել ավելի լավ կյանք:

Կրթության եւ գիտության նախարարության Հաղորդակցության ռազմավարության այս նախագիծը մշակվել է ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի կողմից ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը ցուցաբերվող աջակցության շրջանակում՝ «Մարդու իրավունքների կրթության խթանում Հայաստանում» ծրագրի հովանու ներքո:

Այս փաստաթղթում ներկայացված կարծիքները պարտադիր չէ, որ արտահայտեն Միավորված ազգերի կազմակերպության Ջարգացման ծրագրի պաշտոնական տեսակետները եւ քաղաքականությունը:

Բովանդակություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	7
2. ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ	8
3. ԳԼԽԱՎՈՐ ԼՍԱՐԱՆՆԵՐ և ԹԻՐԱԽԱՅԻՆ ԽՄԲԵՐ	9
4. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԱՅԻՆ ՆԿԱՐԱԳԻՐ	10
5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ	15
6. ՆՊԱՏԱԿՆԵՐ	15
7. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	16
7.1 ՆԵՐՔԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	16
7.2 ԱՐՏԱՔԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ	19
8. ՈՒՂԵՐՁՆԵՐ	24
8.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂԵՐՁՆԵՐ	24
8.2 ՀԱՏՈՒԿ ՈՒՂԵՐՁՆԵՐ՝ ԸՍՏ ԼՍԱՐԱՆԻ և ԽՆԴԻ	26
8.3 ՌԻՍԿԵՐ	29
9. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ	29

Հապավումների ցանկ

ԳՊԿ	Գիտության պետական կոմիտե
ԵՄ	Եվրոպական միություն
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀԿՏՎ	Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն
ՀՀ ԿԳՆ	Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիր
ՄԱՄՀ	ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
ՄեԼԳ	Մոնիտորինգ եւ գնահատում
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք [Terms of Reference]

Համառոտագիր

2011-2015 թ.թ. հաղորդակցության ռազմավարության այս նախագծի նպատակն է անդրադառնալ այն հարցին, թե Հայաստանի Հանրապետության Կրթության եւ գիտության նախարարությունն ինչպես պետք է հաղորդակցվի՝ բառի լայն իմաստով. թե՛ նախարարության աշխատակազմում, թե՛ արտաքին աշխարհի հետ: Մասնավորապես, ռազմավարությունը նպատակ ունի նպաստել ԿԳՆ-ի հեղինակության աճին՝ ապահովելով, որ նախարարության վարած հաղորդակցությունն լիարժեքորեն բավարարում է շահագրգիռ կողմերի կարիքները եւ ակնկալիքները: Ըստ այդմ, այս փաստաթուղթը ամուր հիմք կստեղծի նախարարության ներքին եւ արտաքին հաղորդակցության համար:

Նախարարության հաղորդակցության արդյունավետությունն ընդլայնելու նպատակով այս Հաղորդակցության ռազմավարությունը նախատեսում է հետեւյալ գործողությունները.

- Ներքին հաղորդակցություն.
 - Մշակել հաղորդակցության ներքին ընթացակարգ՝ սահմանելով հետադարձ կապի ներքին մեխանիզմ ԿԳՆ աշխատակազմի համար.
 - Նախարարության հաղորդակցության համար մշակել մոնիտորինգի եւ գնահատման համակարգեր.
 - Ծրագրերի և նախագծերի մշակման գործընթացում ընդգրկել ՀԿՏՎ աշխատակազմին՝ հաղորդակցությանը անդրադարձն ապահովելու նպատակով
 - Թարմացնել նախարարության՝ լրատվամիջոցներին վերաբերող տվյալների բազան.
 - Ստեղծել գիտելիքի կառավարման համակարգ.
- Արտաքին հաղորդակցություն եւ արտաքին շփումներ [outreach].
 - Բացահայտել հաջող փորձնական ծրագրերը.
 - Ձեւավորել քաղաքականությունների քարոզչությամբ զբաղվող մասնագետների շրջանակ.
 - ԿԳՆ-ի հովանավորությամբ ստեղծել հեռուստատեսային և ռադիոհաղորդումներ (թիրախային խմբերի հետ աշխատելու նպատակով), որոնք կլուսաբանեն կրթության և գիտության ոլորտը.
 - Կրթության և գիտության ոլորտի վերաբերյալ նախագծել եւ հրատարակել տեղեկատվական նյութեր.
 - Իրականացնել շահագրգիռ կողմերի հետ աշխատանքի արդյունավետ միջոցների վերհանում.
 - Մարզպետարաններում և համայնքապետարաններում կազմակերպել հանրային բաց քննարկումներ [town hall meetings].

- Լրագրողների համար կազմակերպել աշխատաժողովներ եւ սեմինարներ կրթության և գիտության ոլորտում զարգացումների վերաբերյալ.
- Համակարգել լրագրողների այցելությունները հաջող փորձնական նախաձեռնությունների վայրեր.
- Տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ հիմնել ամենամյա մրցանակ լրագրողների կողմից օրինակելի լուսաբանման համար.
- Սոցիալական ինտերնետային ցանցերում ստեղծել ԿԳՆ-ի էջեր:

Նախեւառաջ, էական նշանակություն ունի այն, որ վերջնական տեսքի բերված Հաղորդակցության ռազմավարությունը հնարավոր լինի լիարժեքորեն կենսագործել Հայաստանի ներկա պայմաններում: Այս առումով առանցքային նշանակություն են ունենալու շարունակական մասնագիտական կրթությունը եւ վերապատրաստումը՝ թվարկված գործողություններին օժանդակելու կարողությունների զարգացման նպատակով: Սակայն, տվյալ պահին նախարարությունը չունի ֆինանսական կամ տեխնիկական ռեսուրսներ, որպեսզի կարողանա իրականացնի առաջարկությունների ամբողջ ծավալը: Անհաժեշտություն է լինելու հայցելու դոնորների աջակցությունը՝ նախարարության հաղորդակցության հետ կապված նպատակների իրականացումն ապահովելու համար:

1. Ներածություն

Հանրային ծառայությունների տրամադրման եւ քաղաքականության մշակման գործընթացում քաղաքացիների եւ այլ շահագրգիռ կողմերի ներգրավումը ժամանակակից կառավարման հիմնարար բաղադրիչներից է: Փոփոխությունների կառավարման մեջ ակտիվորեն ներգրավված լինելը մասնակիցներին շաղկապում է որոշումների ընդունման գործընթացին, ձեւավորում բարեփոխումների համար քաղաքական աջակցություն եւ նվազեցնում քննադատության հնարավորությունները: Այս համատեքստում հաղորդակցությունն ընձեռում է ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման եւ, որոշ ձյուղերում, ծառայությունների մատուցման գործընթացին զանգվածային մասնակցության հնարավորություն: Ավելի բազային մակարդակում այն նաեւ բարելավում է շահագրգիռ կողմերի՝ հանրային ծառայությունների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը եւ ստեղծում հետադարձ կապի հնարավորություն:

Կրթության եւ գիտության նախարարության Հաղորդակցության կարողությունների գնահատումը, որն իրականացվել էր որպես բազային իրավիճակի ամրագրում այս ռազմավարության համար, բացահայտում է հաղորդակցությանն առնչվող մի շարք ուժեղ կողմեր եւ մարտահրավերներ: Գնահատումը բացահայտում է ԿԳՆ հաղորդակցության համար պատասխանատու աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը եւ գործին նվիրվածությունը, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ աշխատակազմը

պատկերացնում է ժամանակակից այն միջավայրը, որում գործում է նախարարությունը: Լրագրողները, որոնք գնահատման շրջանակում հարցազրույց են տվել, նույնպես դրական են արտահայտվել նախարարության աշխատանքի թափանցիկության եւ աշխատակազմի հասանելիության մասին՝ ընդգծելով, որ նախարարությունը, իրենց կարծիքով, լրատվամիջոցների հետ հարաբերությունների առումով կառավարության կազմում ամենաարդյունավետ մարմիններից է:

Լրատվամիջոցների ներկայացուցիչների խիստ դրական արձագանքը ցույց է տալիս, որ նախարարության հաղորդակցության կարողությունն արդեն իսկ նշանակալի է. այդուհանդերձ, ինչպես նշվել է նախարարության աշխատակազմի կողմից, շահագրգիռ կողմերի կարիքներն ու ակնկալիքները լիարժեքորեն բավարարելու ճանապարհին առկա են մի շարք մարտահրավերներ: Այն հանգամանքը, որ քաղաքացիները լավ չեն պատկերացնում կրթական համակարգի կառուցվածքը և հաճախ իրենց հուզող խնդիրներով դիմում են ոչ համապատասխան մարմիններին, ինչպես նաև ԿԳՆ ծրագրերի եւ քաղաքականությունների վերաբերյալ որոշ լրատվամիջոցներ սահմանփակ գիտելիքներ ունեն, նպաստում է բարեփոխումների նկատմամբ անհարկի դիմադրության պրակտիկայի խորացմանը:

Նախարարության աշխատակազմի կողմից մատնանշվել են այս խնդիրների նախնական լուծումներ, մասնավորապես՝ քաղաքականության մշակման փուլում ավելի մեծ ուշադրություն հատկացնել խորհրդակցություններին. այդուհանդերձ, անմիջական եւ անուղղակի շահագրգիռ կողմերի խիստ մեծ թիվը բարդացնում է այս գործընթացը՝ առաջացնելով հաղորդակցությունը նպատակային դարձնելու անհրաժեշտություն՝ բավարարելու համար հայաստանյան հասարակությունում գործող ծառայություն մատուցողների, կրթություն տրամադրողների եւ շահագրգիռ խմբերի ակնկալիքներն ու պահանջները: Այս ռազմավարությունը կմատնանշի «Հաղորդակցության կարողությունների գնահատման» մեջ վերհանված խնդիրների լուծման համար անհրաժեշտ գործողությունները: Դրան կկցվի ռազմավարության իրականացման աշխատանքային ծրագիրը, որը կմանրամասնի ներքոնշյալ առաջնահերթությունները: Ռազմավարության միջոցով ՀԿՏԿ-ն կձգտի ավելի պրոակտիվ եւ նպատակային կերպով բավարարել նախարարության շահագրգիռ բոլոր կողմերի տեղեկատվական բոլոր կարիքները՝ այդպիսով բարելավելով նախարարության եւ իր ծառայությունների վերաբերյալ հանրության ընկալումները:

2. Սկզբունքները

Նախարարության ռազմավարական առաջնահերթությունների կենսագործմանն աջակցելու համար սույն ռազմավարությունը կներկայացնի բոլոր մակարդակներում հաղորդակցության նկատմամբ համընդգրկուն մոտեցում՝ նախարարի՝ քաղաքականության վերաբերյալ խոսքից մինչև ամբողջովին փոխգործուն (ինտերակտիվ) կայքէջի կիրառումը:

Համընդգրկուն (ինտեգրացված) մոտեցումը կապահովի, որ՝

- Շարքային քաղաքացիների համար հասկանալի եւ հասանելի լինեն քաղաքականության մշակման մակարդակի տեղեկությունները.
- Նախարարությունը, հենվելով այն փաստի վրա, որ կրթությունն առաջնահերթություն է բոլոր քաղաքացիների համար, բարեփոխումների իրականացման գործընթացում մարդկանց լայնամասշտաբ ներգրավման հնարավորություն.
- Հաղորդակցության ձևերն ու մեթոդները փոփոխվեն նախարարության փոփոխվող կարիքներին եւ առաջնահերթություններին համապատասխան:

Այս ռազմավարության միջոցով հաղորդակցությունը կդառնա նախարարության քաղաքականության մշակմանը եւ դրա կենսագործմանն առնչվող նպատակների եւ խնդիրների էական բաղադրիչ:

3. Գլխավոր լսարաններ և թիրախային խմբեր

Հայտնի է, որ ԿԳՆ-ն ունի մեծ թվով անմիջական և անուղղակի շահագրգիռ կողմեր, որոնք են՝

Ծառայություն ստացողներ. նախակրթարանների սաներ, աշակերտներ, մասնագիտական կրթության համակարգում ներգրավված ուսանողներ, հետազոտողներ.

Ծառայություն տրամադրողներ. մանկավարժական աշխատողներ, դասախոսներ, ուսումնաօժանդակ կազմ, գիտնականներ.

Կառավարման մարմիններ. տեղական ինքնակառավարման մարմիններ, մարզպետարաններ, Կառավարություն, Ազգային ժողով.

Արտաքին շահառուներ. ծնողներ և ընտանիքի այլ անդամներ, լայն հասարակություն, լրագրողներ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, եկեղեցի, բիզնես և տնտեսության բոլոր հատվածները, Մփյուռք, միջազգային կազմակերպություններ և գործակալություններ:

4. Արտաքին հաղորդակցության աղյուսակային նկարագիր

Հատուկ նպատակ. Բարձրացնել կրթական բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկության եւ հասարակական աջակցության մակարդակը			
Ուղերձ	Լսարան	Գործողություններ/պատասխանատվություն	Միջոցներ (ուղիներ)
<p>Հստակեցնել ԿԳՆ դերը և անմիջական պատասխանատվության ոլորտները</p> <ul style="list-style-type: none"> • ԿԳՆ դերը և գործառույթները, • ԳՊԿ դերը եւ գործառույթները, • Քաղաքապետարանների դերը և գործառույթները կրթության ոլորտում, • Քաղաքապետարանի դերը և գործառույթները կրթության ոլորտում: 	<ul style="list-style-type: none"> • Լայն հասարակություն, • Աշակերտներ, • Ուսանողներ, • Ծնողներ, • Մանկավարժներ, • Գիտության ոլորտի ներկայացուցիչներ, • Լրագրողներ, • Տեղական և միջազգային հասարակական կազմակերպություններ, • Գործարար համայնք: 	<ul style="list-style-type: none"> • Մեմինարներ կրթության և գիտության ոլորտում աշխատող լրագրողների համար (նախարար, փոխնախարարներ, ԳՊԿ նախագահ, ՀԿՏՎ, ԳՊԿ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին), • Կրթության ոլորտի վերաբերյալ ուղեցույց-ձեռնարկ՝ հրապարակված թղթային տարբերակով և էլեկտրոնային տարբերակով «Հայկական կրթական միջավայր» պորտալում (ՀԿՏՎ, ՄԱԶԾ), • ԿԳՆ-ի կողմից ֆինանսավորվող ռադիո և հեռուստահաղորդումներ (ՀԿՏՎ՝ ներառյալ մամուլի քարտուղար), • Մարզային այցելություններ (նախարար, փոխնախարարներ, ԳՊԿ նախագահ, ՀԿՏՎ), • Աշխատակազմի մասնակցությունը «Հայկական կրթական միջավայր» ֆորումին (ՀԿՏՎ, ԿՏԱԿ աշխատակազմ, ԳՊԿ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին): 	<ul style="list-style-type: none"> • Հանրապետական և մարզային լրատվամիջոցներ, • «Հայկական կրթական միջավայր» պորտալ , ԿԳՆ ինտերնետային կայք, • Այլ ինտերնետային կայքեր և ինտերնետային ֆորումներ, • «Կրթություն» շաբաթաթերթ, • ՀԿՏՎ ամենօրյա շփումներ քաղաքացիների և լրատվամիջոցների հետ:
<p>Բարելավել կրթության որակը</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել կրթական հատվածում առկա մարտահրավերները, 	<p>Բոլոր շահառուները:</p>	<ul style="list-style-type: none"> • Կրթության և գիտության ոլորտում աշխատող լրագրողների վերապատրաստում (նախարար, փոխնախարարներ, ԳՊԿ նախագահ, ՀԿՏՎ, ԳՊԿ հասարակայնության հետ կապերի բաժին, ՄԱԶԾ և այլ ստորաբաժանումների պատասխանատուներ), 	<ul style="list-style-type: none"> • Հանրապետական և մարզային լրատվամիջոցներ, • Սփյուռքի լրատվամիջոցներ, • «Կրթություն»

<ul style="list-style-type: none"> • Կրթությունը որպես Հայաստանի գլխավոր մրցակցային առավելություն, • Շահառուների ներգրավում քաղաքականության ձևավորմանը: 		<ul style="list-style-type: none"> • Բարեփոխումների գործընթացի ուղեցույց ուսուցիչների համար, որը ընդգծում է հանրակրթության ոլորտի մարտահրավերները, նրանց ներդրումը և դերը բարեփոխումների գործընթացում. ուղեցույցը հրապարակվում է թղթային տարբերակով և էլեկտրոնային տարբերակով «Հայկական կրթական միջավայր» պորտալում (ՀԿՏՎ, ՄԱԶԾ), • Բարեփոխումների գործընթացի ուղեցույց ուսանողների և դասախոսների համար, որը ընդգծում է մարտահրավերները, նրանց ներդրումը և դերը բարեփոխումների ավելի լայն գործընթացում. ուղեցույցը հրապարակվում է թղթային տարբերակով և էլեկտրոնային տարբերակով «Հայկական կրթական միջավայր» պորտալում (ՀԿՏՎ, ՄԱԶԾ), • ԿԳՆ-ի կողմից հովանավորվող ռադիո և հեռուստահաղորդումներ (ՀԿՏՎ՝ ներառյալ մամուլի քարտուղար), • Մանկավարժների հետ նամակագրություն, որը խրախուսում է մասնակցությունը (ՀԿՏՎ, ԿԳՆ ստորաբաժանումներ), • Խրախուսել ներդրումներ բիզնեսի հատվածից կրթական նպատակներ սահմանելիս (ՀԿՏՎ, ԿԳՆ ստորաբաժանումներ), • Ստեղծել և թարմացնել ԿԳՆ էջերը 	<p>շաբաթաթերթ,</p> <ul style="list-style-type: none"> • «Հայկական կրթական միջավայր» պորտալ, ԿԳՆ ինտերնետային կայք, • էլեկտրոնային նամակագրություն, • Սոցիալական ցանցեր:
---	--	---	--

		<p><i>Odnoklassniki.ru, facebook.com, vkontakte.ru and hayland.am</i> կայքերում (ՀԿՏՎ և այլ ստորաբաժանումների պատասխանատուներ՝ հաղորդակցության գծով):</p>	
<p>Կրթության մատչելիության բարձրացում բոլոր մակարդակներում</p> <ul style="list-style-type: none"> • Հավասար մատչելիություն որպես սկզբունք կրթական բոլոր աստիճաններում՝ ներառյալ կարիքավոր խմբերը, • Նախադպրոցական կրթությունը տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրն է, • Ուսանողների ֆինանսավորման մեխանիզմների առկայություն: 	<p>Բոլոր շահառուներ:</p>	<ul style="list-style-type: none"> • Նախարարի, փոխնախարարների և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների ճեպագրույցներ ազգային լրագրողների հետ (նախարար, , ՀԿՏՎ՝ ներառյալ մամուլի քարտուղար, ԳՊԿ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին), • Աշակերտների, ուսանողների և մանկավարժների հետ նամակագրություն (ՀԿՏՎ), • Ստեղծել և թարմացնել ԿԳՆ էջերը Odnoklassniki.ru, facebook.com, vkontakte.ru, hayland.am կայքերում (ՀԿՏՎ, ԳՊԿ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին և այլ ստորաբաժանումների պատասխանատուներ՝ հաղորդակցության գծով): 	<ul style="list-style-type: none"> • Հանրապետական և մարզային լրատվամիջոցներ, • «Կրթություն» շաբաթաթերթ, • «Հայկական կրթական միջավայր» պորտալ, ԿԳՆ ինտերնետային կայք, • Էլեկտրոնային նամակագրություն, • Մոցիալական ցանցեր:
<p>Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում եւ գործունեության թափանցիկության ու հրապարակայնության մեծացում</p> <ul style="list-style-type: none"> • Ընդգծել ԿԳՆ ձեռքբերումները թափանցիկության ոլորտում, • Կրթական ծառայությունների հաշվետվողականություն, • Խրախուսել շահառուների 	<p>Բոլոր շահառուները:</p>	<ul style="list-style-type: none"> • Մամուլի ասուլիսներ, որոնք մատնացույց են անում ԿԳՆ կիրառած հակակոռուպցիոն միջոցներն ու հաշվետվության մեխանիզմները (նախարար, փոխնախարարներ, ԳՊԿ նախագահ, ՀԿՏՎ, ԳՊԿ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին), • Կոռուպցիոն գործողությունների, արձագանքման մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվական թերթիկների, ուղեցույցների, հեռուստա և ռադիո հաղորդումների պատրաստում և տարածում/հեռարձակում (ՀԿՏՎ, ՄԱԶԾ), 	<ul style="list-style-type: none"> • Հանրապետական և մարզային լրատվամիջոցներ, • «Հայկական կրթական միջավայր» պորտալ, ԿԳՆ ինտերնետային կայք, • «Կրթություն» շաբաթաթերթ:

<p>ներգրավվածությունը հակակոռուպցիոն գործունեության շրջանակում,</p> <ul style="list-style-type: none"> • Խրախուսել հասարակական կազմակերպությունների մասնակցությունը ԿԳՆ ծրագրերի գնահատման ր իրականացման գործընթացում: 		<ul style="list-style-type: none"> • ԿԳՆ-ի կողմից հովանավորվող ռադիո և հեռուստահաղորդումներ (ՀԿՏՎ՝ ներառյալ մամուլի քարտուղար): 	
<p>Հատուկ նպատակ. Ընդլայնել շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը՝ նախարարության արտաքին շփումների բարելավված թիրախայնության միջոցով</p>			
Ուղերձ	Լսարան	Գործողություններ/պատասխանատվություն	Միջոցներ (ուղիներ)
<p>ԿԳՆ ուշադիր է շահառուների կարիքների և պահանջների նկատմամբ և խրախուսում է շահառուների մասնակցությունը</p> <ul style="list-style-type: none"> • Ընդգծել շահառուների արձագանքի առկա մեխանիզմները՝ <ul style="list-style-type: none"> ○ ՀԿՏՎ թեժ գիծ, ○ ԳՊԿ թեժ գիծ, ○ ԿԳՆ ինտերնետային կայքի քննարկումների էջ, ○ «Հայկական կրթական միջավայր» ֆորում և էլեկտրոնային գիտաժողովներ, ○ Դեմ առ դեմ հանդիպումներ: • Արտահայտել նախարարության՝ արձագանքի (պատասխանի) ժամանակահատվածի թիրախները, 	<p>Բոլոր շահառուները:</p>	<ul style="list-style-type: none"> • Մամուլի ասուլիսներ, որոնք ներկայացնում են արձագանքի առկա մեխանիզմները (նախարար, փոխնախարարներ, ԳՊԿ ղեկավար, ՀԿՏՎ), • Կրթական բոլոր մակարդակներում արձագանքի մեխանիզմների վերաբերյալ ձեռնարկներ/թռուցիկներ, հրապարակված թղթային տարբերակով և էլեկտրոնային տարբերակով «Հայկական կրթական միջավայր» պորտալում(ՀԿՏՎ, ՄԱԶԾ), • Իրավական փաստաթուղթ, որը կմանրամասնի “Armedu”-ում և ԿԳՆ ինտերնետային կայքում տեղադրված արձագանքի (պատասխանի) ժամանակահատվածը (ՀԿՏՎ), • Անձնակազմի մասնակցությունը «Հայկական կրթական միջավայր» ֆորումում (ՀԿՏՎ, ԿՏԱԿ աշխատակազմ, ԳՊԿ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին), 	<ul style="list-style-type: none"> • Հանրապետական և մարզային լրատվամիջոցներ, • «Կրթություն» շաբաթաթերթ, • «Հայկական կրթական միջավայր» պորտալ, ԿԳՆ ինտերնետային կայք, • ԳՊԿ վեբ-կայք, • ԿԳՆ թեժ գիծ, • ԳՊԿ թեժ գիծ:

<ul style="list-style-type: none"> • Ավելի մեծ թվով շահառուների ներգրավում կրթության եւ գիտության հատվածներում, • Ընդգծել առկա մասնակցային մեխանիզմները՝ <ul style="list-style-type: none"> ○ դպրոցական/կառավարման խորհուրդներ, ○ ծնողական խորհուրդներ; ○ ուսանողական խորհուրդներ, ○ մանկավարժական խորհուրդներ, ○ ԲՈՒՀ-ի կառավարման խորհուրդներ; ○ հոգաբարձուների խորհուրդներ: 		<ul style="list-style-type: none"> • ԿԳՆ-ի կողմից հովանավորվող հեռուստա և ռադիո հաղորդումներ (ՀԿՏՎ՝ ներառյալ մամուլի քարտուղար): 	
---	--	---	--

5. Ընդհանուր նպատակը

Ինչպես նշված է «Հաղորդակցության կարողությունների գնահատման» մեջ, ԿԳՆ առջև ծառայած գլխավոր մարտահրավերներից մեկն ապահովելն է, որ նախարարության արտաքին հաղորդակցության կառույցները եւ գործողությունները բավարարեն շահագրգիռ բոլոր կողմերի պահանջումները, եւ որ այն զինված լինի անհրաժեշտ գործիքներով՝ բարձրացնելու համար հանրային իրազեկվածության ու կրթական ոլորտի բարեփոխումներին, մասնավորապես՝ Կրթության զարգացման պետական ծրագրի նախագծում (2011-2015) սահմանված առանցքային առաջնահերթություններին ցուցաբերվող աջակցության մակարդակը.

- Կրթության որակի բարելավում.
- Բոլոր մակարդակներում կրթության հասանելիության ընդլայնում եւ աշակերտների ներգրավվածության մեծացում, մասնավորապես՝ կարիքավոր խմբերից.
- Դասավանդող կազմի սոցիալական ապահովության եւ մասնագիտական զարգացման խորացում.
- Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում եւ գործունեության թափանցիկության եւ հրապարակայնության մեծացում:

Այս ռազմավարությունը կսահմանի հաղորդակցության տեղը այս առաջնահերթություններին աջակցելու, ինչպես նաեւ նախարարության ձեռքբերումների տեսանկյունից բարձրացնելու հարցում: Այն նաեւ կարող է հանդիսանալ լավագույն փորձի օրինակ, որը կարող է կիրառվել Հայաստանի Հանրապետության այլ նախարարությունների եւ վարչությունների համար, իհարկե համադրվելով համապատասխան մասնագիտական վերապատրաստման և, անհրաժեշտության դեպքում, տեխնիկական աջակցության հետ:

6. Նպատակներ

Հաղորդակցության ռազմավարության (2011-2015) նպատակն է լուծումներ առաջարկել այն հարցին, թե Հայաստանի Հանրապետության Կրթության եւ գիտության նախարարությունը (ԿԳՆ) ինչպես է կազմակերպելու հաղորդակցությունը, որպեսզի հասնի առանցքային առաջնահերթությունների /քաղաքականությունների իրագործմանը, որոնք սահմանվել են Կրթության զարգացման պետական ծրագրում (2011-2015 թթ.), Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության մեջ, Եվրոպական հարեւանության քաղաքականության Գործողությունների ծրագրում (2009-2011 թթ.), Կառավարության ծրագրում (2008-2012 թթ.) եւ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում (ԱՀՌԾ-2):

Սահմանված նպատակներն են.

- Բարելավել Կրթության եւ գիտության նախարարության հեղինակությունը՝ նախարարության հաղորդակցության արդյունավետության եւ ազդեցության մեծացման միջոցով.
- Բարելավել նախարարության ներսում եւ կրթության ոլորտի այլ կառույցների միջեւ տեղեկությունների ներքին հոսքը՝ արտաքին հաղորդակցությանն օժանդակելու նպատակով.
- Բարձրացնել Հայաստանի քաղաքացիների եւ տեղական լրատվամիջոցների շրջանում ԿԳՆ-ի ծրագրերի, որդեգրած քաղաքականությունների եւ բարեփոխումների օրակարգի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը.
- Ընդլայնել շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը՝ նախարարության արտաքին շփումների հստակեցված թիրախայնության միջոցով:

7. Մարտահրավերներ եւ առաջարկություններ

Հաղորդակցության կարողությունների գնահատումը վեր հանեց մի շարք ինստիտուցիոնալ եւ միջավայրային մարտահրավերներ ուղղված հաղորդակցության արդյունավետ կազմակերպմանը: Հաղորդակցության ռազմավարության նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ:

7.1 Ներքին հաղորդակցություն

21-րդ դարում համընդհանուր ճանաչում է ստացել այն փաստը, որ արդի կառավարման համակարգերում մեծ դեր է խաղում արդյունավետ հաղորդակցությունը: Հենց միայն այս պատճառով, հաղորդակցությունների և դրանց ներքին տարբեր ստորաբաժանումների և վարչությունների միջև չի կարող նախապես չալանավորված բնույթ կրել: Շատ կարևոր է հաղորդակցությունը դիտարկել որպես եռակողմ գործընթացի կարևոր բաղադրիչ. այս եռակողմ գործընթացը ներառում է քաղաքականության մշակումը, ծառայությունների և հաղորդակցության տրամադրումը, մասնավորապես՝ կրթության եւ գիտության ոլորտներում, ուր առկա են բազմապիսի շահառուներ, ուղղակի և անուղղակի թիրախ խմբեր:

Ներքին հաղորդակցության ռազմավարության հիմնական բաղադրիչներից է նախարարության և այլ մարմինների միջև հաղորդակցության կառավարումը: Ներկայումս Հայաստանում պետական մարմինները կիրառում են կառավարման ներքին ցանցը

(Միավորված տեղեկատվական պլատֆորմ), Մալբերի Էլ-կառավարումը: Այս երեք առանձին պլատֆորմների կիրառումն առաջացնում է խնդիրներ և անարդյունավետ է:

Տվյալ ռազմավարության ուշադրության կենտրոնում կլինի արտաքին հաղորդակցությունն ապահովող ներքին հաղորդակցությունը, իսկ առավել լայնածավալ ներքին հաղորդակցությունը կգնահատվի ՄԱԶԾ-ՅՈՒՆԵՍԿՕ կարողությունների գնահատման ծրագրի շրջանակներում:

Ընդունված է, որ հաղորդակցությունը պետք է լինի ռազմավարական, ինչպես նաև՝ ամբողջովին ներգծված (ինտեգրված) լինի քաղաքականության մշակման եւ իրականացման մեխանիզմներում ինչպես կոնկրետ նախարարությունների ներսում, այնպես էլ ողջ կառավարությունում: Սրան հասնելու համար հաղորդակցության ռազմավարական ծրագրերը պետք է հատկորոշեն հաղորդակցության յուրաքանչյուր բաղադրիչի նպատակները քաղաքականության մշակման, քաղաքականության իրականացման եւ քաղաքականության հղկման պարբերաշրջանի ողջ ընթացքում եւ պետք է ունենան հաստատված կառուցվածք, որի շրջանակում ընտրվում են տվյալ ուղերձի համար ամենահարմար ուղիները: Հաղորդակցությունը՝ ծրագրերի և նախագծերի մշակման գործընթացի մաս դարձնելու համար անհրաժեշտ է ներգրավել ՀԿՏՎ-ի անձնակազմին:

ԿԳՆ հաղորդակցության ինտեգրացված ռազմավարություն իրականացման համար անհրաժեշտ կլինի կատարել կոնկրետ քայլեր՝ գիտակրթական հաստատությունների, առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների (ներառյալ՝ Գիտության պետական կոմիտեի) եւ ՀԿՏՎ-ի միջեւ ներքին հաղորդակցության հետագա ամրապնդման նպատակով: Խորհուրդ է տրվում արտաքին հաղորդակցությանն օժանդակելու նպատակով ձեռնարկել հետեւյալ միջոցառումները.

- Ներքին տեղեկատվական մեխանիզմների բարելավում, օրինակ՝ որոշ հարցերի շուրջ նախարարության դիրքորոշումների փոխանցում ՀԿՏՎ-ին՝ «Mulberry» և այլ էլեկտրոնային համակարգի միջոցով:
- Տրամադրել ամենամայա տեղեկատվություն ստորաբաժանումների նախատեսվող աշխատանքների մասին, որպեսզի ՀԿՏՎ-ն ի վիճակի լինի ավելի բարձր որակով պատրաստել իր աշխատանքային պլանը, ինչպես նաև անհապաղ տեղեկատվությունները հույժ կարելուր խնդիրների վերաբերյալ:
- Կրթական եւ գիտական հաստատությունների հետ ճշգրտել հասարակական հնչեղություն ունեցող հարցերի հրապարակայնացման անհրաժեշտությունը՝ նախքան դրանք մուտք կգործեն հասարակական ոլորտ, ինչպես նաև մշակել մեխանիզմներ հասարակության ուշադրության շրջանում հայտնված խնդիրներին արձագանքելու համար:

- Ստեղծել մոնիտորինգի եւ գնահատման արդյունավետ համակարգ, որը ՀԿՏՎ-ին թույլ կտա սահմանել որակային եւ քանակային ստուգողական ցուցանիշներ, որոնք հնարավորություն կտան գնահատել գործունեության ազդեցությունը եւ արդյունքները:

Խորհուրդ է տրվում նաեւ իրականացնել հաղորդակցության ուղղությունների կառավարման պարտավորությունների ավելի հստակ վերաբաշխում նախարարի, երեք փոխնախարարների, Գիտության պետական կոմիտեի նախագահի եւ ՀԿՏՎ-ի միջեւ: Վերոնշյալը կարող է կենսագործվել պարտավորությունների կոնկրետ ոլորտների կամ թեմաների ձեւակերպմամբ. այս դեպքում նախարարը ստանձնում է առաջնորդողի դեր հիմնական ռազմավարական կամ քաղաքականության մշակման հարցերի դեպքում, իսկ մեկնաբանություն ստանալու կամ հարցազրույց անցկացնելու ամենօրյա դիմումները կարող են բավարարվել ՀԿՏՎ-ի միջոցով, որը *բոլոր* լրագրողների համար կծառայի որպէս դիմելու առաջին աստիճան: Առաջարկվում է, որ նախարարի տեղակալները մեկնաբանություններ տրամադրեն կրթական քաղաքականությանն առնչվող հարցերի մեծամասնության վերաբերյալ. նախարարի անմիջական ներգրավումը կարելի է պահել ամենակարեւոր հայտարարությունների հնչեցման կամ քաղաքականության մասին ծրագրային հարցազրույցների համար: Հնարավորության դեպքում պետք է զերծ մնալ նախարարին կամ այլ բարձրաստիճան պաշտոնյաներին ուղղակիորեն, առանց ՀԿՏՎ-ի ներգրավման, մոտենալուց, քանի որ սա չափազանց դժվարացնում է արդյունավետ կառավարման եւ մոնիտորինգի իրականացումը:

Ինչ վերաբերում է կոնկրետ տեխնիկական հարցերի, առաջարկվում է, որ ՀԿՏՎ-ն լիազորվի նման հարցումները հղել համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին կամ համապատասխան տեխնիկական մասնագետներին, ովքեր ի գործու կլինեն լրատվամիջոցներին տրամադրել առավել մանրամասն տեղեկություններ կամ տվյալներ: Սա կօգնի լուծել լրագրողներից ստացվող այն բողոքների հարցը, ըստ որոնց, լրատվամիջոցներին տրամադրվող տեղեկությունները հաճախ գուրկ են մանրամասն կամ լրացուցիչ տվյալներից:

Առաջարկվում է, որ նախարարի մամուլի քարտուղարը եւ ՀԿՏՎ-ի պետը, նախարարի եւ երեք փոխնախարարների հետ սերտ համագործակցությամբ, մշակեն ներքին արարողակարգի մի փաստաթուղթ, որպէսզի հասկորոշեն լիազորությունների փոխանցման համապատասխան համակարգ՝ լրատվամիջոցներից ստացվող հարցումների եւ դիմումների կոնկրետ տեսակների արձագանքելու նպատակով: Գլխավոր նպատակը պետք է լինի նախարարի՝ լրատվամիջոցներին առնչվող զբաղվածության ծավալի կրճատումը, որը հնարավորություն կտա նրան ավելի շատ ժամանակ ունենալ ռազմավարական եւ քաղաքականությանը վերաբերող հարցերի շուրջ կենտրոնանալու համար: Այսուհանդերձ, նաեւ առաջարկվում է, որ երբ նախատեսվում է հայտարարել քաղաքականության մշակման որեւէ խոշոր նախաձեռնության կամ կրթական բարեփոխման մասին, տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչները հրավիրվեն նախարարի հետ դեմառդեմ հանդիպման՝ նախքան պաշտոնական հայտարարություններ անելը կամ մամուլի

ասուլիսներ անցկացնելը: Ավելին, այն դեպքերում, երբ շահագրգիռ կողմերը ներգրավված են եղել քաղաքականության ձեռնարկման գործընթացում, առաջարկվում է, որ նրանք ևս մասնակցեն մամուլի ասուլիսներին եւ հայտարարություններին՝ այդպիսով ընդգծելով քաղաքականության մշակման նախաձեռնությունների «վարից վեր» եւ համընդգրկուն բնույթը:

Հիմնվելով օժանդակող ներքին հաղորդակցությանը վերաբերող՝ այս ռազմավարության մեջ ներառված առաջարկությունների վրա, ՄԱԶԾ-ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ծրագրված կարողությունների զարգացման նախաձեռնությունը ԿԳՆ-ին թույլ կտա պարզել, այլ ոլորտների շարքում, ներքին հաղորդակցության լրացուցիչ բաղադրիչներ՝ հետագա զարգացման համար:

7.2 Արտաքին հաղորդակցություն

7.2.1 Համագործակցություն լրատվամիջոցների հետ

Համաձայն «Հաղորդակցության կարողությունների գնահատման» այն հատվածի, որը վերաբերում է մամուլի ներկայացուցիչների հետ անցկացված քննարկումներին, ներկայումս հայաստանյան լրատվամիջոցներում քիչ են կրթական եւ գիտական ոլորտներում մասնագիտացած լրագրողները: Մասնագիտացման այս պակասը կարող է խնդիրներ հարուցել, մասնավորապես՝ բավականին բարդ և հակասական խնդիրների լուսաբանման պարագայում այն կարող է մարտահրավերներ առաջացնել ԿԳՆ-ի համար՝ հաղորդակցությանն առնչվող իր նպատակներին հասնելու հարցում:

Նաեւ հստակ է, որ եթե ԿԳՆ-ն պատրաստվում է իր առաքելությունն արդյունավետորեն իրականացնել, ապա կարելու է, որ նախարարության, լրատվամիջոցների եւ լայն հանրության միջեւ հետագայում զարգանան վստահության վրա հիմնված փոխհարաբերություններ: Կարելու է գիտակցել, որ էական առաջընթաց արձանագրելու համար ռազմավարությունը կպահանջի առնչվող բոլոր կողմերի՝ քաղաքական դերակատարների, քաղաքացիական ծառայողների, հաղորդակցության համար պատասխանատու աշխատակազմի եւ, վերջապես, հայաստանցի լրագրողների պատրաստակամ ներգրավում:

Միննույն ժամանակ, միջազգային լրատվամիջոցների ակտիվ ներգրավումը թե տարածաշրջանում, թե համաշխարհային մակարդակով, պետք է դիտարկել որպես դրական հնարավորություն կրթության և գիտության ոլորտներում ձեռքբերումների և նախաձեռնությունների լուսաբանման համար:

Ներկայումս ակնհայտ է, որ Հայաստանում լրատվամիջոցները սահամանափակ պատկերացում ունեն ԿԳՆ ծրագրի եւ քաղաքականության վերաբերյալ: Այս իրավիճակի բարելավման համար առաջարկվում է, որ նախարարությունը, նախարարի

առաջնորդությամբ, ԿԳՆ առաջնահերթությունները տարածելու հարցում ավելի պրոակտիվ դիրք ստանձի լրատվամիջոցների եւ այլ կարծիք ձեւավորողների հետ փոխահարաբերություններում:

Այս նպատակին հասնելու համար առաջարկվում են հետեւյալ կոնկրետ քայլերն ու գործողությունները.

- Որպես նախարարության հասարակայնության հետ կապերի տարեկան ռազմավարության մաս, պետք է ավելի մեծ ուշադրություն հատկացվի լրատվամիջոցների մասնակցությամբ կարելորագույն միջոցառումների նախօրոք պլանավորմանը, ներառյալ՝ մամուլի ասուլիսից կամ ծրագրային հարցազրույցներից առաջ ելույթի հիմնական կետերի՝ ներքին կարգով տրամադրումը.
- Պետք է մեծացվի փոխնախարարների դերը հարցազրույց տալու հարցում.
- Մամուլի ասուլիսների կամ բրիֆինգների ընթացքում կատարված ԿԳՆ բոլոր հայտարարությունները պետք է առաջնահերթության կարգով տեղադրվեն նախարարության վեբկայքում.
- ԿԳՆ բյուջեում պետք է առանձնացվեն որոշակի ռեսուրսներ (մարդկային, ֆինանսական և այլն) պրոակտիվ և բազմաբնույթ (ԶԼՄ-երի և հաղորդակցության այլ միջոցների) հաղորդակցության համար.
- Նախարարությունը պետք է նախաձեռնի կրթության եւ գիտության ոլորտում աշխատող լրագրողների համար գիտակրթական հատվածում առկա մարտահրավերների եւ նախարարության ծրագրի ու քաղաքականության օրակարգի շուրջ սեմինարների կազմակերպումը:

Հաշվի առնելով կրթության եւ գիտության ոլորտներում շահառուների շրջանակը՝ պետք է չանտեսել մարզային լրատվամիջոցների դերը: Հետեւաբար առաջարկվում է, որ ՀԿՏՎ-ն մամուլի որեւէ ակումբի կամ ուսուցում իրականացնող կազմակերպության հետ գործընկերությամբ, առաջադրանք ստանա թարմացնելու լրատվամիջոցների քարտեզագրման իր ռազմավարությունը, որում կներառվեն հանրապետական եւ մարզային բոլոր լրատվամիջոցների համառոտ բնութագրերը (անկետաները), ինչը նախարարությանը հնարավորություն կտա հատուկ ուղերձներ հղել լսարաններին՝ օգտագործելով ինչպես համապետական, այնպես էլ մարզային լրատվամիջոցների հետ ձևավորված կապերը:

Ի հավելումն, առաջարկվում է, որ ԿԳՆ-ն, քաղաքացիական հասարակության համապատասխան կազմակերպությունների հետ գործընկերությամբ, սահմանի տարեկան մրցանակներ այն անհատ լրագրողների կամ լրատվամիջոցների համար, որոնք նպաստել են կրթության և գիտության բնագավառի կարելոր խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկման կամ ընկալման խթանմանը: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կամ զարգացման հարցերով զբաղվող միջազգային

գործակալությունների (ՄԱՄՀ, ՅՈՒՆԵՍԿՕ, ՄԱԶԾ, եւ այլն) հետ գործընկերությունը կարող է զգալիորեն բարելավել թափանցիկության ընկալումը, երբ նման մրցանակներ են տրվում:

7.2.2 Արտաքին շփումներ եւ հանրային արձագանքման մեխանիզմ

Կառավարման ժամանակակից ժողովրդավարական համակարգի պայմաններում հաղորդակցությունը հանդիսանում է էական բաղադրիչն այն երկխոսության, որը տեղի է ունենում կառավարության եւ քաղաքացիների միջեւ, ում ծառայում է կառավարությունը եւ ում առջեւ, վերջին հաշվով, կառավարությունը հաշվետու է: Կառավարության արդյունավետ հաղորդակցության ցանկացած համակարգ պարտադիր պետք է ներառի կառույցներ եւ «ուղիներ», որոնց միջոցով քաղաքացիները՝ որպես անհատներ կամ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անդամներ, կարող են արտահայտել իրենց տեսակետները եւ կարծիքները:

Ժողովրդավարական կառավարման կարեւորագույն նպատակներից մեկը հանրային քաղաքականությունների մշակման եւ գնահատման գործընթացին քաղաքացիների մասնակցության խթանումն է: Քաղաքացիների համար տեղեկությունների հասանելիությունը, նրանց մասնակցությունը քաղաքականություններին վերաբերող բանավեճերին եւ նախարարության ծրագրերի մոնիտորինգին կենսական նշանակություն ունեն ԿԳՆ-ի գործունեության արդյունավետության, հաշվետվողականության, թափանցիկության եւ արձագանքման կարողությունների բարելավման տեսանկյունից:

Կենսական կարեւորություն ունի գիտակցելը, որ հանրային այսպիսի մասնակցությունը պետք է լինի ավելին, քան ԿԳՆ-ի ամենօրյա աշխատանքը լրատվամիջոցների հետ: Առաջարկվում է, որպեսզի նախարարության քաղաքականության յուրաքանչյուր նախաձեռնություն զուգորդվի լուսաբանման մի շարք գործողություններով, որոնք որպես քայլ-առ-քայլ ծրագիր պետք է մշակվի ՀԿՏ վարչության կողմից: Չնայած չի կարելի անտեսել լրատվամիջոցների հետ առօրյա աշխատանքը, ԿԳՆ-ն իր քաղաքականություններն ու գործնական աշխատանքը լավագույնս կներկայացնի եւ Հայաստանի քաղաքացիների մտահոգություններին պատշաճ ձեւով կարձագանքի գործիքների մի «ժողովածուի» ձեւավորման միջոցով, որը կկազմվի եվրաստլանտյան տարածաշրջանում կառավարությունների որդեգրած լավագույն փորձի հիման վրա, ինչպես նաեւ՝ օգտվելով այնպիսի հմտությունների ամբողջական շարքից, որոնք ներկայում համարվում են մասնավոր, առեւտրային հատվածների համար կենսական նշանակություն ունեցող բաղադրիչները:

Նախարարության արտաքին շփումների ազդեցությունը բարձրացնելու և հաղորդակցության վերոնշյալ գործիքակազմը համալրելու նպատակով, առաջարկվում է, որ ՀԿՏ վարչությունը ստեղծի հասարակական ճանաչում վայելող անձանցից բաղկացած

համախոհների մի խումբ, որը տարբեր ասպարեզներում կներկայացնի նախարարության նախաձեռնությունները և կմասնակցի նախարարության կողմից այդ նախաձեռնությունների պաշտոնական ներկայացմանը: Ակնկալվում է նաև, որ նրանք ակտիվ մասնակցություն կունենան կրթությանն ու գիտությանը վերաբերվող ռադիո և հեռուստատեսային բանավեճերին, «թոք շոու»-ներին և վավերագրական ֆիլմերում՝ առաջ մղելով նախարարության դիրքորոշումը:

Ավելին, որպես արտաքին շփումների արդյունավետ եղանակ, նախարարության համար կարևոր է ներկայացնել ոչ միայն իր նախաձեռնություններն ու ուղղությունները, այլ նաև ներկայացնել իր քաղաքականության առավելությունները գործնականում: Փորձնական ծրագրերում ունեցած հաջողությունները հանրությանը ներկայացնելով՝ նախարարությունն առավել հասանելի կդարձնի իր նպատակները՝ դրանով իսկ ուժեղացնելով նախարարության ուղերձների ազդեցությունը: Ծրագրերի արդյունքում գրանցված դրական փոփոխությունները ներկայացնելով՝ նախարարությունը ոչ միայն հաղորդակցվում է, այլև ներկայացնում ու հաշվետու է լինում իր աշխատանքի համար, ինչն էականորեն բարձրացնում է հանրության վստահությունը և օգնում ճիշտ պատկերացում կազմել կազմակերպության մասին:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ գոյություն ունի ԿԳՆ-ի պարտավորություն՝ իր գործունեության ընթացքում ներգրավել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ որպես կրթական համակարգի նկատմամբ հանրային վստահություն ստեղծելու ու պահպանելու իր առաքելության առանցքային մաս, առաջարկվում է, որ նշանակալի շեշտ դրվի այս ռազմավարությունը Հայաստանի ներսում տեղական եւ մարզային հաղորդակցության գործողությունների աստիճանի հասցնելու վրա (ներառյալ հասարակության անդամների հետ անմիջականորեն շփվող ԿԳՆ աշխատակիցների եւ անձնակազմի կարեւորագույն դերը), քանի որ էական նշանակություն ունի այն, որ հանրային վստահություն ստեղծվի ոչ միայն նախարարության բարձր մակարդակներում, այլև կրթության ծառայությունների մատուցման «առաջին գծում», որտեղ առանձին ընտանիքները, ուսանողները, աշակերտները եւ ուսուցիչները կրելու են անմիջական ազդեցություն:

Գիտակցվում է այն, որ ԿԳՆ-ն բախվում է լրջագույն մարտահրավերների՝ կապված լայն հասարակությանը սեփական առաջնահերթությունների եւ քաղաքականությունների մասին իրազեկելու հետ: Մասնավորապես, գիտակցվում է, որ քաղաքացիների շրջանում դեռևս գոյություն ունի կրթական համակարգի սահմանափակ ընկալում, եւ կա մի թյուրբարոյություն, որ նախարարությունը պարտավորություն ունի՝ կապված առանձին դպրոցներում ծագող կոնկրետ խնդիրների հետ: Ավելին, չնայած ԿԳՆ-ն շատ բանի է հասել քաղաքացիների հետադարձ կապի ուժեղ եւ կատարելագործվող մեխանիզմների մշակման գործում, սակայն քաղաքացիների շրջանում դեռևս առկա է սեփական մտահոգությունները ոչ ճիշտ կառույցի ուղղելու պրակտիկան: Այս պատճառով, առաջարկվում է, որ նախարարությունը պրոակտիվորեն ձգտի քաղաքացիների եւ քաղաքացիական հասարակության խմբերի համար հստակեցնել իր դերը եւ անմիջական պատասխանատվության ոլորտները՝ հղելով համապատասխան ուղերձներ:

Քաղաքացիների (հատկապես անմիջական շահագրգիռ կողմերի, ծառայություններից օգտվողների, ինչպիսիք են ուսուցիչները, ընտանիքները եւ սովորողները) հետ խորհրդակցումը եւ քաղաքացիների արձագանքների մշտական հավաքումը կարող է հզոր գործիք դառնալ համապատասխան քաղաքականությունների, ծառայությունների տրամադրման եւ հաշվետվողականություն ապահովման առումով: Հանրային ծառայությունների բարելավման եւ քաղաքացիներին հանրային քաղաքականությունների մշակման գործընթացին մասնակից դարձնելու նպատակով՝ հետեյալ հարցերը պետք է ստանան առաջնահերթություն.

- ծառայությունների մատուցման բարելավում եւ տեղեկությունների հասանելիություն.
- արտաքին շփումների, մոտեցումների տարածման ամրապնդում եւ ուղղորդում.
- խորհրդակցական եւ հետադարձ կապի մեխանիզմների մշակում եւ դրանց կենսագործման խթանում:

Տեղեկությունների եւ ծառայություններից օգտվողների/քաղաքացիների/ հարցումներին պատասխանների տրամադրման բարելավմանն ուղղված գործողություններից են.

- ԿԳՆ տեղեկատվական «Թեժ գծի» խթանում՝ որպես անմիջական շփման կետ, որտեղ քաղաքացիները կարող են առավել արագ եւ արդյունավետ ձեռով պատասխաններ ստանալ կրթությանը վերաբերող իրենց հարցերին.
- Գիտության պետական կոմիտեի համար տեղեկատվական «Թեժ գծի» ստեղծում՝ որպես գիտական խնդիրներին վերաբերող անմիջական կապի միջոց շահագրգիռ կողմերի համար.
- Կրթական եւ գիտական ոլորտների վերաբերյալ ռադիո և հեռուստահաղորդումների պատրաստում լրատավամիջոցների հետ սերտ համագործակցությամբ.
- Քաղաքացիներին ուղղված բուկլետների եւ տեղեկատվական թերթիկների հրատարակություն, կրթական հարցերի վերաբերյալ քաղաքացիների իրազեկության մակարդակի բարձրացմանն ուղղված քարոզարշավների կազմակերպում.
- ԿԳՆ եւ ԳՊԿ ինտերնետային կայքերի, «Հայկական կրթական միջավայր» պորտալում ավելի մեծ ծավալով օգտագործում՝ քաղաքացիների մեկնաբանությունները եւ արձագանքները գրանցելու եւ դրանց պատասխանելու նպատակով.
- Հայկական Մփյուռքի հետ տեղեկատվական աշխատանքների ակտիվացում, որը երկրի զարգացման, ներառյալ՝ բիզնես հատվածի հզորացման եւ ներդրումների ներգրավման առումով առանցքային շահագրգիռ կողմ է:

ՀԿՏՎ-ի դերը քաղաքացիների եւ ԿԳՆ-ի միջեւ կապերի ստեղծման եւ ամրապնդման հարցում առանցքային է: Հետեւաբար առաջարկվում է, որ նախարարությունը քայլեր ձեռնարկի՝

- ուսուցման ծրագրերի եւ սեմինարների, ինչպես նաեւ տեխնիկական միջոցների տրամադրման միջոցով ավելի զարգացնելու ՀԿՏՎ աշխատակազմի՝ քաղաքացիների հետ հետադարձ կապի մեխանիզմների կառավարման կարողությունները.
- անցկացնելու հարցումներ, որպեսզի վերանայի արտաքին շփումների ռազմավարությունները եւ դրանց ազդեցությունը շահագրգիռ կողմերի շրջանում.
- շարունակաբար զարգացնելու խորհրդակցելու եւ արձագանքների գրանցման մեխանիզմները.
- որոշելու հատուկ ռազմավարություններ՝ երաշխավորելու, որ խոցելի եւ կարիքավոր խմբերը առաջնահերթություն ստանան ինչպես քաղաքականությունների մշակման, այնպես էլ տեղեկատվական կապերի տեսակետից: /Սա էական կարեւորություն ունի, եթե կառավարության «Կայուն զարգացման ռազմավարությունը» (ԱՀՌԾ-2) պետք է իրականացվի/:

Խորհրդակցումը եւ արձագանքների հավաքումը հանրային քաղաքականությունների մշակման գործընթացին քաղաքացիների ակտիվ ներգրավման կարեւոր եղանակներից է: Առանցքային մեխանիզմների թվում են.

- ուղեցույցերի մշակում, հրատարակում եւ տարածում, որպեսզի քաղաքացիները իրազեկվեն տեղեկատվական տարբեր ուղիների առկայության մասին եւ որպեսզի խրախուսվեն քաղաքացիների կողմից արձագանքները.
- քաղաքացիների արձագանքների հավաքման մեխանիզմների մշակում, որպեսզի ԿԳՆ-ի քաղաքականություններ մշակող թիմը դիտարկի դրանք եւ բարելավվի քաղաքականությունները՝ քաղաքացիների կարիքներին համապատասխան.
- համապետական մասշտաբով հանրային կարծիքի ուսումնասիրությունների կիրառում՝ հասարակության կողմից կրթության եւ գիտության ոլորտների վերաբերյալ գնահատական ստանալու նպատակով:

8. Ուղերձներ

8.1 Ընդհանուր ուղերձներ

ՀՀ ԿԳ նախարարության՝ թափանցիկության և քաղաքականության ձևավորման գործընթացին հասարակական մասնակցությունն ապահովելու նպատակին համապատասխան՝ երեք ընդհանուր ուղերձ պետք է հղվի ամենատարբեր և արդյունավետ ձևերով, որոնք հիմքեր կստեղծեն հետագայում թիրախային լսարանին և որոշակի խնդրին հատուկ կոնկրետ ուղերձների համար:

Առաջին ընդհանուր բնույթի ուղերձի նպատակը պետք է լինի նախարարության դերի և անմիջական պատասխանատվության ոլորտների հստակեցումը:

Այս նպատակին կարելի է հասնել կրթության և գիտության ոլորտին վերաբերող ռադիո և հեռուստահաղորդումներին նախարարության կողմից ընտրված հասարակական ճանաչում ունեցող անձանց մասնակցության միջոցով: Չնայած այս պահին նախարարությունը կարող է բավարար միջոցներ չունենալ նման նախաձեռնության իրականացմանն օժանդակելու համար, շատ կարևոր է հետագա տեխնիկական աջակցության և կարողությունների զարգացման ծրագրի մաս դարձնել նաև նման ռեսուրսների ապահովումը: Որպես այլընտրանք, նախարարության պատասխանատվության ոլորտների հստակեցմանը կարելի է հասնել վերոնշյալ թեմատիկ սեմինարների միջոցով՝ այն լրագրողների համար, ովքեր աշխատում են կրթության եւ գիտության բնագավառում, ինչպես նաև կրթական եւ գիտական հատվածներում հաշվետվողականության վերաբերյալ ձեռնարկների կամ տեղեկատվական թերթիկների հրատարակման միջոցով՝ նախատեսված լրագրողների եւ շահագրգիռ կողմերի համար: Այս երկու միջոցառումները հնարավորություն կտան ընդլայնել ոլորտի մասին շահառուների գիտելիքները, ինչպես նաև Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանն արդարացի քննադատության ենթարկել և ուղղել ոչ ճշգրիտ լուսաբանումները: Ձեռնարկները եւ տեղեկատվական թերթիկները պետք է նաև տեղադրվեն «Հայկական կրթական միջավայր» պորտալում՝ ավելի լայն տարածման համար:

Երկրորդ ընդհանուր ուղերձը, հիմնված լինելով նախարարության դերի և անմիջական պատասխատվության ոլորտների հստակեցման վրա, պետք է ուղղվի նախարարության՝ որպես քաղաքացիների պահանջների և կարիքների հանդեպ ուշադիր և պատասխանատու կառույցի նկարագրի ձևավորմանը: Այն պետք է ընդգրկի հասարակությանը հասանելի հետադարձ կապի բազմազան մեխանիզմների և դրանց կիրառման խրախուսման վերաբերյալ տեղեկատվություն: Բացի ՁԼՄ-ներին ուղղված այս տեղեկացումը, հաղորդակցության առկա միջոցների մասին մանրամասներ հաղորդող ուղեցույցների, թռուցիկների և քաղաքացիական ընթացակարգերի մշակումն ու հրապարակումը, ինչպես նաև ԿԳՆ կայքում հետադարձ կապի առկա մեխանիզմների ներկայացումը նախարարության ամենատարբեր շահառուներին հնարավորություն կտան արտահայտել իրենց պահանջները:

Երրորդ ընդհանուր ուղերձի նպատակը պետք է լինի խրախուսել շահառուների ներգրավվածությունը կրթական եւ գիտական հատվածներում: Շահագրգիռ և քաղաքականապես գիտակից շահառուներին որոշումների կայացման և քաղաքականության մշակման գործընթացին մասնակից դարձնելով՝ նախարարությունը համագործակցություն կհաստատի իր յուրաքանչյուր թիրախային խմբի կարծիք ձևավորողների հետ: Շահագրգիռ կողմերի մասնակցությունը կարող է ապահովվել առկա այնպիսի մեխանիզմների արդյունավետ կիրառման միջոցով, ինչպիսիք են դպրոցական խորհուրդները, ինչպես նաև հանրապետական մակարդակում առկա այնպիսի մեխանիզմների արդյունավետ կիրառման միջոցով, ինչպիսիք են «Հայկական կրթական միջավայր» պորտալ ինտերնետային ֆորումը եւ էլեկտրոնային համաժողովները:

8.2 Հատուկ ուղերձներ՝ ըստ լսարանի և խնդրի

Կրթության զարգացման պետական ծրագրի (2011-2015 թ.թ.) նախագծի շրջանակում սահմանված գլխավոր առաջնահերթությունների հիման վրա առաջարկվում են հետևյալ ուղերձները՝ որպես հետագա զարգացումների համար մեկնարկային կետեր.

Կրթության որակի բարելավում

Որոշ քաղաքացիների շրջանում նկատվող համառ դիմադրությունը նախարարության բարեփոխումների ծրագրին, որը մասամբ պայմանավորված է ոլորտի բազմաթիվ խնդիրների թյուրըմբռնմամբ, խոչընդոտում է պետական քաղաքականության արդյունավետության ընկալմանը:

Տեղին չի լինի մշտապես քաղաքացիներին ծանրաբեռնել ոլորտում առաջացած խնդիրներով, սակայն, որպես քաղաքացիներին տեղեկատվության փոխանցման առաջնային ռեսուրս, կարևոր է կատարել նմանատիպ տեղեկությունների մանրամասն փոխանցումը լրագրողներին և ուսուցիչներին՝ ներկայացնելով առկա մարտահրավերներին ուղղված նախարարության աշխատանքները և քաղաքականության մշակման գործընթացը:

Այս նպատակի իրագործմանը կարելի է հասնել կրթության և գիտության ոլորտում աշխատող լրագրողների վերոնշյալ տեղեկատվական և թեմատիկ սեմինարների միջոցով: Տեղեկատվական սեմինարները և հանդիպումները պետք է խթանեն լրագրողներին և ՋԼՄ-ների աշխատակազմերին վերլուծել քաղաքականության առաջարկներն իրենց իսկ համատեքստում: Մանկավարժների եւ այս ոլորտում այլ ծառայություն մատուցողների համար՝ հանդիպումների կազմակերպումը և բարեփոխումների այնպիսի մատչելի ուղեցույցի ստեղծումը, որը կներկայացնի մարտահրավերները և քաղաքականության նախաձեռնություններից ակնկալվող արդյունքները, ինչպես նաև այս շահագրգիռ կողմերի արձագանքը «Հայկական կրթական միջավայր» պորտալ ինտերնետային ֆորումի միջոցով հնչեցնելու խրախուսումը հնարավորություն կտան կարծիք ձևավորող ազդեցիկ խմբերի հետ համաձայնություն և համագործակցություն հաստատելու համար:

Ոլորտի բարդ և հակասական հարցերը կարելի է ավելի պարզ մատուցել հանրությանը՝ ներկայացնելով փորձնական ծրագրերի լավագույն մոդելները: Առավել պարզ և ընկալելի օրինակները կարելի է ներկայացնել նաև կարճ փաստագրական տեսանյութերի տեսքով նախարարության կողմից կազմակերպվելիք վերոնշյալ ռադիո և հեռուստահաղորդումների ընթացքում:

Ինչպես նշվում է Կրթության զարգացման պետական ծրագրում, բարեփոխումները պետք է առաջնորդվեն կրթությունը որպես Հայաստանի գլխավոր մրցակցային առավելություն կայացնելու սկզբունքով: Այս ուղերձը հատկապես կարևոր է բիզնեսով զբաղվողների համար այն պատճառով, որ նկատվում է շրջանավարտների մասնագիտական հմտությունների և աշխատաշուկայի պահանջների համապատասխանեցման անհրաժեշտություն: Շահառուների ներգրավմանը միտված ուղերձը պետք է ներառի նաև բիզնեսով զբաղվողներին ուղղված կոնկրետ մտքեր ու գաղափարներ, որոնք կխրախուսեն քաղաքականության մշակման գործընթացում նրանց մասնակցության և ներդրումների կատարմանը:

Բացի այդ, շրջանավարտների մասնագիտական հմտությունների և աշխատաշուկայի պահանջների միջև նկատվող անհամապատասխանությունը նպաստում է հայ երիտասարդության մեջ ուսումն արտերկրում շարունակելու միտմանը: Բանիմաց շրջանավարտների արտագաղթը կարող է բացասական ազդել հայ հասարակության և տնտեսության հետագա զարգացման վրա: Այս համատեքտում Որպես այդպիսին կրթության դիրքավորումը որպես Հայաստանի գլխավոր մրցակցային առավելություն ուղերձը պետք է ուղղված լինի ավագ դպրոցի աշակերտների և բուհերի ուսանողների համար: Նախարարության համար չափազանց կարևոր կլինի աշխատել աշակերտների և ուսանողների հետ՝ նրանց հնարավորություն ընձեռելով արտահայտել իրենց մտահոգությունները և առաջարկությունները բարեփոխումների մասին:

Նշված նպատակը կարելի է իրականացնել հայ երիտասարդների կողմից այցելվող սոցիալական կայքերում նախարարության էջեր ստեղծելու, թարմացնելու և վերահսկելու միջոցով:

Կրթության մատչելիության ընդլայնում բոլոր մակարդակներում և աշակերտների ներգրավվածության բարձրացում

Կրթական համակարգի հավասար մատչելիությունը պետք է ներկայացնել ոչ թե որպես քաղաքականության ընտրություն, այլ որպես սկզբունք: Կրթության զարգացման պետական ծրագիրը սահմանում է թիրախներ մի շարք կրթական մակարդակների համար: Այնուամենայնիվ այն հատուկ շեշտադրում է կատարում նախադպրոցական կրթության մատչելիության վրա, հատկապես գյուղական համայնքներում: Հիմնված լինելով ընդհանուր տեղեկացման վրա, այն է՝ հստակեցնել նախարարության դերն ու անմիջական պատասխանատվության ոլորտները, այս հարցի վերաբերյալ հաղորդակցությունը պետք է ընդգծի հաշվետվողականությունը՝ որպես խիստ կարևոր հարց:

Նախարարությունը պետք է հավասարապես ուշադրության արժանացնի և խրախուսի շահառուների ներգրավվածությունը կրթության բոլոր աստիճաններում: Տեղական համայնքներ այցելությունները նախարարը կարող է համատեղել և հանդիպումներ ունենալ տեղական կառավարման պաշտոնյաների հետ, որպեսզի շեշտի տեղական ինքնակառավարման մարմինների

պատասխանատվությունը նախադպրոցական կրթության և հանրակրթության կառավարման գործում: Ծնողները, ուսուցիչները և տեղական ԶԼՄ-ներն այս տեղեկացման գլխավոր թիրախներն են: Տեղական լրատվամիջոցները կամ ուսուցիչների հետ անմիջական էլեկտրոնային նամակագրությունն այս հաղորդագրության փոխանցման գլխավոր միջոցներն են: Առաջարկվում է, որպեսզի այս գործողությունների համար ՀԿՏ վարչության պատասխանատու աշխատակիցները ստանան համապատասխան աջակցություն և վերապատրաստում:

Դասավանդող անձնակազմի սոցիալական ապահովության և մասնագիտական որակավորման բարձրացում

Հաղորդակցության կարողությունների գնահատումը բնորոշեց դասավանդողներին որպես կրթական քաղաքականության վերաբերյալ ազդեցիկ կարծիք ձևավորող: Որպես այդպիսին՝ այս թիրախային խմբի հետ սերտ հարաբերությունների ձևավորումը գլխավոր առաջնահերթությունն է պետք է լինի: Կարճաժամկետ պլանում նախարարության համար ձեռնտու է շեշտել ուսուցիչների սոցիալական ապահովությունը երաշխավորելու իր հանձնառությունը: Եթե բյուջեի սղության պատճառով այս նախաձեռնությունը մոտ ապագայում իրական չի թվում, կա վտանգ ուսուցիչների հետ ամուր հարաբերություններ կառուցելու փոխարեն վերջիններիս օտարելու: Ուրեմն՝ նախարարության հաղորդակցության ռազմավարությունը պետք է ուղղվի դասավանդողների համար արձագանքի արտահայտման մեխանիզմների հզորացման և իրեն՝ որպես դասավանդողների կարիքներին և պահանջներին արձագանքող ներկայացնելու վրա:

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը կարևորում է դասավանդողների ակտիվ մասնակցությունը «Հայկական կրթական միջավայր» ֆորումում: Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությունը կարող է առավել արդյունավետ դարձնել նախարարության և դասավանդողների փոխադարձ կապը՝ պարբերաբար մասնակցելով ֆորումի քննարկումներին:

Կոռուպցիոն ռիսկերի նվազեցում գործունեության թափանցիկության ու հրապարակայնության բարձրացմամբ

Նախարարությունը պետք է ընդգծի իր նշանակալից ձեռքբերումները թափանցիկության ոլորտում, ինչպես օրինակ՝ իր դիրքը որպես Հայաստանի Հանրապետության ամենահանրամատչելի նախարարություն: Միննույն ժամանակ այն պետք է ընդգծի իր աշխատանքը հակակոռուպցիոն կառույցներում և իր ապագա պլանները, որոնք ամրագրված են նախարարության ընդունած՝ կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների ծրագրում: Հասարակական մասնակցության և կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության վերաբերյալ ընդհանուր տեղեկացման համաձայն՝ նախարարությունը պետք է խրախուսի շահառուներին ակտիվորեն մասնակցել հակակոռուպցիոն պայքարին՝ նշելով արձագանքի մեխանիզմները որպես կաշառակերության մասին հայտնելու համապատասխան ալիքներ:

8.3 Ռիսկեր

Ցանկացած հաղորդակցություն ունի որոշակի նպատակային լսարան և որոշակի նպատակային մեկնաբանություն: Հաղորդակցման ամենամեծ ռիսկը հաղորդվող տեղեկության աղճատումն է փոխանցման ընթացքում և հաջորդող սխալ մեկնաբանումը: Այս ռիսկերի նվազեցման նպատակով, յուրաքանչյուր հաղորդակցություն պետք է ունենա իր կոնկրետ թիրախը, պետք է կազմվի ճշգրիտ և տարբեր ձևերով կրկնվի: Ցանկացած հարցի շուրջ հասարակական կարծիքը կարող է ենթարկվել ձեռնածության դրսի անձանց և շահերի կողմից: ՀԿՏՎ-ի թիմային ակտիվ աշխատանքի արդյունքում մշակված ուղերձի հմուտ կրկնությունը հաղորդակցության բազմաթիվ միջոցներով նվազեցնում է այս ռիսկը:

Ի հավելումն, ռիսկ կա հասարակությանը շատ ավելի մեծ սպասումներ ներշնչել, քան հնարավոր է իրականացնել առկա ռեսուրսներով: Ուստի կարևոր է, որ նախարարությունը հստակեցնի խոստումները՝ ընդգծելով առաջին մի քանի տարվա գործունեության հիմնաքարերը, ինչպես նաև վերջնական նպատակները՝ նշելով այն ազդեցությունը, որ քաղաքականությունը վերջնական արդյունքում կունենա կրթական եւ գիտական հատվածների վրա:

9. Մոնիթորինգ և գնահատում

Հեշտ է թիրախներ սահմանել, շատ ավելի դժվար է վերահսկել և գնահատել արդյունքներն ու ազդեցությունները, ինչպես նշվում է ԿԳՆ հաղորդակցության ռազմավարության ծրագրում (2006-2008թթ.): Այնուամենայնիվ սրանք խիստ կարևոր են ռազմավարության արդյունավետությունն ու համապատասխանությունն ապահովելու համար: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է, որ հնարավորության դեպքում յուրաքանչյուր հաղորդակցական գործունեություն ունենա հավաստի ցուցիչներ, ազդեցության գնահատման միջոցներ (օրինակ՝ հարցումներ), ստուգման մեխանիզմներ և զեկուցման համակարգ:

ԿԳՆ հաղորդակցության ռազմավարության և դրա իրականացման համար առաջարկվող միջոցների արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ կլինի մշակել Մոնիթորինգի և գնահատման ընդգրկուն համակարգ (M&E՝ ՄԳՀ): Սրա մեջ մտնում է նպատակների, արդյունքների, ելքերի և գործողությունների սահմանումը, ինչպես նաև պատասխանատու աշխատակազմի ընտրությունը:

Կարելի է կիրառել նաև Հաղորդակցության ռազմավարության և դրա իրականացման նախագծի գնահատման հետևյալ մեթոդները.

- ա. տվյալ առիթով ստեղծված խմբեր, հատկապես՝ ուսուցիչների, ծնողների, ուսանողների, բիզնեսի առաջնորդների և հայկական ՋԼՄ-ների շրջանում;
- բ. ինտերնետային ֆորումների, հատկապես՝ ԿԳՆ-ի կողմից ղեկավարվող «Հայկական կրթական միջավայր» պորտալի /www.armedu.am/, Կրթության և գիտության նախարարության /edu.am/ եւ Գիտության պետական կոմիտեի /scs.am/ ինտերնետային կայքերի բովանդակության վերլուծություն.
- գ. ներքին գնահատականներ, որոնք պետք է քննարկվեն և համաձայնեցվեն ԿԳՆ հետ.
- դ. ԿԳՆ ներքին հետադարձ կապ:

Հավելված Ա. Իրականացման պլան

Ներքին հաղորդակցություն

Ընդհանուր նպատակ.

Բարելավել Կրթության եւ գիտության նախարարության հեղինակությունը՝ նախարարության հաղորդակցության արդյունավետության եւ ազդեցության մեծացման միջոցով

Կոնկրետ խնդիրներ.

Բարելավել տեղեկատվության հոսքը նախարարության ներսում եւ կրթության ոլորտի այլ կառույցների միջեւ՝ նպաստելով նախարարության արտաքին հաղորդակցությանը:

Գործողություն	Հիմնական արդյունքներ	Ժամանակացույց	Պատասխանատու անձ (անձինք)	Արժեքը (\$)	Գործընկերներ	Մեկնաբանություն
<p>Սեմինար/քննարկում.</p> <ul style="list-style-type: none"> Հաստատել ռազմավարության նպատակները և առաջարկությունները, Քննարկել նախարարության հիմնական ուղերձները, 	Համաձայնություն ԿԳՆ հիմնական ուղերձների շուրջ (2011 - 2015)	2011 թ. մարտ	ՀԿՏՎ		ՄԱԶԾ	<p>Սեմինար/քննարկումը կանցկացվի նախարարությունում</p> <p>Այս գործողությունը հնարավորություն կտա անցկացնել բաց եւ կառուցողական քննարկում վճռորոշ հարցերի եւ նախարարության առաջիկա տարիների հիմնական ուղերձների շուրջ:</p> <p>Ինչպես նաեւ՝ կձեռավորվի ճիշտ պատկերացում առ այն, թե ինչպես յուրաքանչյուր վարչություն կարող է մասնակցել ընդհանուր աշխատանքներին:</p> <p>Ստրատեգիան կտրամադրվի մասնակիցներին (ԿԳՆ միջին կարգի և բարձրաստիճան պաշտոնյաներ)՝ սեմինար քննարկումից առաջ:</p>
Հաստատված Հաղորդակցության ռազմավարությունը շնորհանդես		Մեկնարկի	Նախարար, ՀԿՏՎ:		ՄԱԶԾ	Շնորհանդեսը կանցկացվի ՄԱԶԾ-ում

<p>դոնորներին, լրագրողներին և այլ շահառուներին:</p>		<p>ամսաթիվ(ՄԱ)</p>			<p>Այս գործողությունը պետք է ներառի ստրատեգիայի իրականացմանն աջակցելու նպատակով մշակված ծրագրի առաջարկ:</p>
<p>Հաղորդակցության ընթացակարգի փաստաթղթի մշակում, ներառյալ</p> <ul style="list-style-type: none"> • պարտականությունների հատակ տարանջատում՝ լրատվամիջոցներից ստացվող տարատեսակ հարցումներին ու դիմումներին պատասխանելու նպատակով, • մամուլի միջոցառումների նախօրոք պլանավորում, այդ թվում՝ շահագրգիռ կողմերի ներգրավում, • յուրաքանչյուր վարչության եւ կրթական հաստատության ներսում հաղորդակցության համար պատասխանատուների որոշում, • ՀԿՏՎ-ի աշխատակիցների մասնագիտացում նախարարության գործողության յուրաքանչյուր ոլորտում, • «Mulberry» էլեկտրոնային համակարգի միջոցով ամենամսյա տեղեկատվության տրամադրում ՀԿՏՎ-ին եւ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնին՝ սպասվելիք գործողությունների վերաբերյալ, • կրթական և գիտական հաստատությունների դժվարությունների/հասարակության հետաքրքրության շրջանակում գտնվող այլ խնդիրների վերաբերյալ ժամանակին և ճշգրիտ տեղեկատվության տրամադրում՝ նախքան դրանց մասին հասարկության 	<p>Հաղորդակցության ընթացակարգ</p>	<p>ՄԱ + 3 ամիս</p>	<p>Նախարար, աշխատակազմի ղեկավար, ՀԿՏՎ, հրավիրյալ մասնագետ:</p>		<p>Պարտականությունների բաշխումը կարելի է կենսագործել նախարարության յուրաքանչյուր բարձրաստիճան պաշտոնյայի համար աշխատանքի կոնկրետ ոլորտ կամ թեմա սահմանելու միջոցով:</p> <p>ՀԿՏՎ-ն եւ մամուլի քարտուղարն արդեն նախօրոք պլանավորել են մամուլի միջոցառումները, եւ այդ հաջողված փորձը պետք է ձեռնարկվի ստանա ընթացակարգում:</p> <p>Ընթացակարգը պետք է լինի «կենդանի» փաստաթուղթ, որտեղ պետք է նշված լինեն հաղորդակցության համար պատասխանատու աշխատակիցների անուններն ու կոնտակտային տվյալները:</p> <p>Պարբերաբար թարմացվող տվյալների արխիվները կնպաստեն լրատվամիջոցների վերաբերյալ մանրամասն փաթեթների ստեղծմանն ու լրագրողների համար սեմինարների պլանավորմանը:</p> <p>Դրանք նաեւ կնպաստեն քաղաքականության մշակմանն ու ինստիտուցիոնալ հիշողության</p>

<p>տեղեկանայք,</p> <ul style="list-style-type: none"> • տեղեկատվության արխիվացում եւ թարմացում, • ՀԿՏՎ աշխատակազմի ներգրավում նախագծերի եւ ծրագրերի մշակման աշխատանքներում, • ՀԿՏՎ աշխատակազմի ներգրավում փորձնական ծրագրերի մոնիտորինգի եւ գնահատման գործում: 					<p>զարգացմանը:</p> <p>ՀԿՏՎ անձնակազմին ծրագրերի եւ նախագծերի մշակման գործում ներգրավելով՝ հնարավոր կլինի հաղորդակցությունը ներգծել նախարարության հետագա գործողություններում (այս գործողությունը պետք է ներառվի ՀԿՏՎ SU-ներում):</p> <p>ՀԿՏՎ աշխատակիցներին փորձնական ծրագրերի մոնիտորինգի եւ գնահատման գործում ներգրավելը հնարավորություն կտա հատկորոշել հաջողության պատմությունները արտաքին շփումների նպատակով (այս գործողությունը պետք է ներառվի ՀԿՏՎ SU-ներում):</p>
<p>Նախարարության հաղորդակցության մոնիտորինգի եւ գնահատման գործիքների մշակմանը նվիրված սեմինար</p>	<p>Մոնիտորինգի եւ գնահատման գործիքակարգ և ԿԳՆ հաղորդակցության պլան</p>	<p>ՄԱ + 2 ամիս</p>	<p>Հրավիրյալ մասնագետ</p>		<p>Մոնիտորինգի ու գնահատման գործիքակարգն ու 2011 թ. պլանը հնարավորություն կտա ՀԿՏՎ-ին վերլուծել հաղորդակցության արդյունքներն ու ազդեցությունը, սահմանել ստուգողական ցուցանիշներ եւ թիրախներ, ինչպես նաեւ ձեւավորել համապատասխան ինստիտուցիոնալ կարողություններ՝ հետագա հաղորդակցության պարբերաշրջաններում այդ գործունեությունն իրականացնելու համար:</p> <p>Այլ գործողությունը կիրականացվի</p>

						մոնիտորինգի եւ գնահատման վերապատրաստման հիման վրա և կներառի ՀԿՏՎ-ի համար մոնիտորինգի եւ գնահատման շրջանակներում մասնակցային:
<p>Հաղորդակցության գործողությունների ներգծում նախարարության ներկա ծրագրերում եւ նախագծերում:</p> <ul style="list-style-type: none"> Կազմված է հաղորդակցության եւ իրազեկման բաղադրիչի ընթացիկ ծրագրերի ցուցակը եւ հանդիպումների ժամանակացույցը. անհրաժեշտության դեպքում մինի ծրագրերի կազմում կամ առկա ծրագրերի փոփոխում: Կազմված է աշխատանքային խումբ՝ գոյություն ունեցող ծրագրերը տեղում այցելելու համար 	<p>Հանդիպմանը հրավիրված են բոլոր բաժինների հաղորդակցության համար պատասխանատու անձինք, ովքեր պատասխանատու են ծրագրի իրականացման համար:</p> <p>Նախարարության յուրաքանչյուր ծրագրի/նախագծի համար առկա են հաղորդակցության եւ իրազեկման մինի ծրագրեր:</p>	ՄԱ + 2 ամիս – ՄԱ + 4 ամիս	ՀԿՏՎ			<p>Հաղորդակցության եւ իրազեկման ծրագրերում պետք է նշված լինեն նպատակները, թիրախային խմբերը, հաղորդագրությունները, հաղորդագրության ուղիները, գործողությունները, ժամկետները, պատասխանատու անձանց անունները եւ բյուջեն:</p> <p>Հաղորդակցության նկատմամբ համակարգված եւ ռազմավարական մոտեցումը հնարավորություն կտա որոշել եւ բաշխել արտաքին շփումների (աութրիչի) համար նախատեսված կոնկրետ ռեսուրսները:</p> <p>Տեղում այցելությունները ՀԿՏՎ-ին հնարավորություն կտան պարզել Նախարարության գործող ծրագրերում առկա հաղորդակցության խնդիրները;</p> <p>Այս սեմինար/քննարկումը հնարավորություն կտա ՀԿՏՎ-ին հատկորոշել հաջողված փորձնական ծրագրերը, որոնք նախարարության քաղաքական նպատակներն ի ցույց կդնեն հասանելի եղանակով:</p>
Մամուլի քարտեզագրման միջոցով թարմացնել ՀԿՏՎ-ի լրատվամիջոցների	Մամուլի քարտեզ	ՄԱ+ 3 ամիս	ՀԿՏՎ			Արդեն առկա է կենտրոնական եւ մարզային լրատվամիջոցների

<p>տվյալների բազան:</p>					<p>տվյալների բազա: ՀԿՏՎ-ի համար օգտակար կլինի թարմացնել այդ բազան էլեկտրոնային մամուլի (կայքէջեր եւ բլոգերներ) մասին տվյալներով:</p> <p>Թարմացվող մամուլի քարտեզը հնարավորություն կտա նախարարությանը նպատակային դարձնել կոնկրետ հարցերին առնչվող հաղորդակցությունը տեղական եւ մարզային լրատվամիջոցների թողարկումներում:</p>
<p>Ստեղծել գիտելիքի կառավարման համակարգ՝ ներառելով՝</p> <ul style="list-style-type: none"> • ռազմավարական հաղորդակցության կառավարման, • մամուլի հետ հարաբերությունների, • հաղորդակցության մոնիտորինգի եւ գնահատման ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր, • ստրոաբաժանումների գործառնական ընթացակարգեր: 	<p>Աշխատակիցների համար գործում է ներքին ցանց/համագործակցությունը խթանող աշխատավայր «Mulberry» էլեկտրոնային համակարգում: Ցանցում ընդգրկված են ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր (ՄԱԸ) եւ վարչությունների աշխատանքների վերաբերյալ պարբերաբար թարմացվող տեղեկություններ:</p>	<p>ՄԱ + 3 ամիս</p>	<p>ՀԿՏՎ</p>		<p>Ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը հիմք կհանդիսանան կառույցի ներսում ուսուցման եւ մասնագիտական զարգացման, ինչպես նաեւ ինստիտուցիոնալ կարողությունների կատարելագործման համար:</p> <p>Մամուլի միջոցառումների նախօրոք մշակված պլաններում պետք է նշվի մամուլի միջոցառումների իրականացման գործում շահագրգիռ կողմերին, ըստ անհրաժեշտության, ներգրավելու եղանակը:</p> <p>ՄեԳ ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը կմշակվեն ՄեԳ վերաբերյալ սեմինարի ժամանակ (տես Ինստիտուցիոնալ եւ մասնագիտական զարգացման ծրագիրը):</p>

						Սկզբնական փուլում այլ գործողությանը առաջնայնություն չի տրվի՝ CAPNAM-ի կողմից լրացումներ կատարելու առաջարկության ակնկալիքով:
--	--	--	--	--	--	---

Արտաքին շփումների և մասնակցության գործիքներ

Ընդհանուր նպատակը.
 Բարելավել Կրթության և գիտության նախարարության հեղինակությունը՝ նախարարության հաղորդակցության արդյունավետության և ազդեցության մեծացման միջոցով

Կոնկրետ խնդիրներ.
 Բարձրացնել կրթական բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկության և հասարակական աջակցության մակարդակը
 Ընդլայնել շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը՝ նախարարության արտաքին շփումների բարելավված թիրախայնության միջոցով:

Գործողություն	Հիմնական արդյունքներ	Ժամանակացույց	Պատասխանատու անձ (անձինք)	Արժեքը (\$)	Գործընկերներ	Մեկնաբանություն
Կոնկրետ խնդիր. Բարձրացնել կրթական բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկության և աջակցության մակարդակը						
Հատկորոշել հաջող փորձնական նախագծերը. <ul style="list-style-type: none"> Նախարարության ընթացիկ փորձնական ծրագրերի քարտեզագրում, Նախարարության քաղաքականության ապագա գերակայություններին համահունչ հաջողություններ գրանցած դեպքերի վերհանում, Փորձնական ծրագրերում ներգրավված շահագրգիռ դերակատարների մոբիլիզացում՝ որպես քաղաքականության շահերի պաշտպաններ: 	Փորձնական ծրագրերի քարտեզագրում. Փորձնական ծրագրերում ներգրավված շահագրգիռ անձանց մոբիլիզացում՝ որպես քաղաքականության շահերի պաշտպաններ:		ՀԿՏՎ			Նախարարության փորձնական ծրագրերը կարող են նպաստել հաղորդակցությանը՝ քաղաքականությունները մատչելի և ընկալելի ձևով ցուցադրելու միջոցով: Նոր քաղաքականության առաջ բերած փոփոխությունները ցուցադրելը կվերականգնի վստահությունը նախարարության ուղերձների և նրա բրենդի նկատմամբ:
Ստեղծել քաղաքականության շահերի պաշտպանների խումբ. <ul style="list-style-type: none"> ՀԿՏՎ-ն որոշում է այն ոլորտները, որտեղ շահերի պաշտպանները կարող են 	Հավաքագրել քաղաքականության շահերի պաշտպանների,		Նախարար, փոխնախարարներ, ՀԿՏՎ, մամուլի քարտուղար			Ակնկալվում է, որ քաղաքականության շահերի պաշտպանները կմասնակցեն ԿԳՆ-ի արտաքին շփումների

<p>նպաստել նախարարության արտաքին շփումներին եւ ուղերձները տեղ հասցնելուն:</p> <ul style="list-style-type: none"> • Հավաքագրվում են արվեստի եւ հասարակական հանրահայտ գործիչներ, որպեսզի հրապարակավ պաշտպանեն ԿԳՆ-ի նախաձեռնությունները: <ul style="list-style-type: none"> ○ Ներգրավման նպատակով հանդիպումներ են տեղի ունենում շահերի հնարավոր պաշտպանների հետ: ○ Նրանց ներկայացվում են ԿԳՆ-ի օրակարգը, քաղաքականությունների մշակման նախաձեռնությունները եւ նրանցից ակնկալվող մասնակցության եղանակը: ○ Մշակվում է գործողությունների ժամանակացույց: 	<p>ովքեր պատրաստ են աջակցել ԿԳՆ-ին</p>				<p>շրջանակներում կազմակերպված մի շարք միջոցառումների:</p> <p>Շահերի մի շարք պաշտպանների ներգրավումը հանրային ուշադրությունը կշեղի նախարարության պաշտոնյաներից, եւ հնարավոր է, որ վստահություն սերմանի բարեփոխումների օրակարգի նկատմամբ:</p> <p>Այս գործողության զարգացման համար ՀԿՏՎ-ի կողմից առաջարկվել է ստեղծել աշխատանքային խումբ՝ ներառելով համալսարանների ղեկավարներին:</p> <p>Այս գործողության համար հատկացված գումարով շահերի պաշտպանների համար նախատեսված է հյուրընկալություն կազմակերպել:</p>
<p>Ստեղծել կրթությանը նվիրված հեռուստատեսային հաղորդաշար.</p> <ul style="list-style-type: none"> • Որոշել լրատվամիջոցների շրջանում գործընկերներին, • Մշակել տեխնիկական առաջադրանք, • Պայմանագիր կնքել հաղորդաշարը պատրաստող թիմի հետ, • Մշակել հաղորդաշարի խնդիրները, ուղերձները, բովանդակությունը, • Փաստագրական/«թոք շոու»/համատեղված ձեւաչափ, • Հրավիրել շահագրգիռ կողմերի 	<p>Փորձնական հաղորդաշար</p>		<p>ՀԿՏՎ, մամուլի քարտուղար</p>		<p>Հեռուստատեսային փորձնական հաղորդաշարը մեծ հավանականությամբ կունենա ամենամեծ ազդեցությունը՝ հեռուստատեսության տարածվածության շնորհիվ.</p> <p>ԿԳՆ-ի համար կարելուր կլինի գործընկերություն հիմնել որեւէ լրատվամիջոցի հետ՝ ծախսերի նվազեցման նպատակով:</p>

<p>ներկայացուցիչների, շահերի պաշտպանների եւ նախարարության պաշտոնյաների,</p> <ul style="list-style-type: none"> • Օգտագործել նախարարության փորձնական ծրագրերը՝ ցուցադրելու քաղաքականությունների առաջարկների ազդեցությունը, • Հաղորդումները տեղադրել YouTube վեբկայքում եւ նախարարության վեբկայքում: 					<p>Կոսովոյում կիրառված եւ հաջողություն ունեցած ձեռնարկը «Թոք շոու» էր, որի ընթացքում ցուցադրվում էին կարճ փաստագրական ֆիլմեր՝ քննարկումն առաջացնելու նպատակով:</p> <p>Թոք շոուները կարելի է անցկացնել Հայաստանի տարբեր դպրոցներում եւ համալսարաններում:</p> <p>Թոք շոուների ընթացքում ցուցադրվող փաստագրական տեսանյութերը կարող են ներկայացնել նախարարության հաջողված փորձնական նախաձեռնությունները:</p>
<p>Ստեղծել կրթությանը նվիրված ռադիո հաղորդաշար.</p> <ul style="list-style-type: none"> • Որոշել լրատվամիջոցների շրջանում գործընկերներին. • Մշակել տեխնիկական առաջադրանք. • Պայմանագիր կնքել հաղորդաշարը պատրաստող թիմի հետ. • Մշակել հաղորդաշարի խնդիրները, ուղերձները, բովանդակությունը. • Փաստագրական /ուղիղ եթեր զանգահարելու հնարավորություն/ համատեղված ձեռնարկ. • Հրավիրել շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների, շահերի պաշտպանների եւ նախարարության պաշտոնյաների. • Օգտագործել նախարարության 	<p>Փորձնական հաղորդաշար</p>		<p>ՀԿՏՎ, մամուլի քարտուղար</p>		<p>Թե՛ ռադիո եւ թե՛ հեռուստատեսային հաղորդումները պետք է հասանելի լինեն նախարարության վեբկայքում</p> <p>Եւ պետք է ակտիվորեն խթանեն քաղաքացիների մասնակցությունը հանրային քաղաքականությունների մշակմանը եւ գնահատմանը:</p>

<p>փորձնական ծրագրերը՝ ներկայացնելու քաղաքականությունների առաջարկների ազդեցությունը.</p> <ul style="list-style-type: none"> • Հաղորդումները տեղադրել նախարարության վեբկայքում: 					
<p>Կատարելագործել հետադարձ կապի մեխանիզմները ԿԳՆ վեբկայքում.</p> <ul style="list-style-type: none"> • Օտար լեզվով ներկայացված էջերը պարունակում են ամենակարևոր տեղեկությունների մանրամասները (ներկայում գտնվում է կառուցման փուլում). • Տեղեկություններ քաղաքականությունների մշակման եւ այն մասին, թե ինչպես մասնակցել այդ գործընթացին. • Նախարարության բլոգը, որում կներկայացվեն վեբկայքի հյուրերի հոդվածները / մեկնաբանություններ /ԿԳՆ քաղաքականության շահերի պաշտպանների տեսակետները. • Էլեկտրոնային դիմումներ. • «Դիմեք մեզ» էջ: 	<p>Վեբկայքն ավելի մատչելի է օտարերկրացի այցելուների համար եւ տեղեկություններով հարուստ՝ տեղացի շահագրգիռ կողմերի համար:</p> <p>Բլոգերների ժամանակացույց:</p>		ՀԿՏՎ		<p>Վեբկայքը վերջերս վերակառուցվել է. ավելացվել են նոր ֆունկցիաներ, ներառյալ՝ քննարկումների հարթակ, առցանց գրասենյակ (ամիսը մեկ անգամ հնարավորություն է լինելու անմիջականորեն հարցեր տալու) եւ հետադարձ կապի առցանց ձև:</p> <p>Էլեկտրոնային դիմումները անհատներին եւ շահագրգիռ խմբերին իրենց գաղափարներն արտահայտելու եւ այլ քաղաքացիների կողմից արձագանք ստանալու հնարավորություն են ընձեռում: Բավարար աջակցություն ստանալու պարագայում դիմումը պետք է հաշվի առնվի քաղաքականություն մշակելիս:</p> <p>«Դիմեք մեզ» էջում պետք է առկա լինի ստացվող հարցումների հետ կապված պարտականությունների հստակ տարաբաժանում:</p>
<p>Հրատարակված նյութեր, որոնց թվում.</p> <ul style="list-style-type: none"> ○ գրքույկներ, ○ ուղեցույց-բուկլետներ, ○ պաստառներ: 	<p>Գրքույկները եւ ուղեցույցերը մշակվում են եւ բաժանվում քաղաքացիներին</p>		ՀԿՏՎ		<p>Պետք է հրատարակվեն գրքույկներ եւ ուղեցույցեր տարբեր թեմաների վերաբերյալ, այդ թվում.</p> <ul style="list-style-type: none"> • Կրթական հատվածի կառուցվածքն ու կառավարումը, այն է՝ ով է հաշվետու

					<p>ծառայությունների համար,</p> <ul style="list-style-type: none"> • Կրթական հատվածում առկա մարտահրավերները, • Առկա մասնակցային մեխանիզմները եւ քաղաքականության մշակման եւ ընդունման շրջափուլում շահագրգիռ կողմերի ներգրավման այլ հնարավորություններ, • Բարեփոխումների գործընթացը, • Հակակոռուպցիոն գործողություններ եւ հաշվետվականության մեխանիզմներ: <p>Բոլոր հրատարակությունները պետք է գրված լինեն պարզ եւ մատչելի ոճով:</p> <p>Բոլոր հրատարակությունները պետք է առկա լինեն կրթական հաստատություններում:</p> <p>Հրատարակությունների էլեկտրոնային տարբերակները պետք է վերբեռնվեն «Հայկական կրթական միջավայր» պորտալում՝ ավելի լայն լսարանի մատչելի լինելու համար:</p> <p>Կրթական հաստատություններում կարելի է նաեւ փակցնել շահագրգիռ կողմերի մասնակցությունը խրախուսող</p>
--	--	--	--	--	--

						պաստառներ:
Կոնկրետ խնդիր. Ընդլայնել շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը՝ նախարարության արտաքին շփումների բարելավված թիրախայնության միջոցով						
<p>Անցկացնել հարցում շահագրգիռ կողմերի շրջանում, որով կուսումնասիրվի.</p> <ul style="list-style-type: none"> Կրթական ոլորտի վերաբերյալ տեղեկությունների ստացման՝ շահագրգիռ կողմերի աղբյուրները, Կրթական ծառայությունների ժողովրդականությունը, ԿԳՆ վերաբերյալ ընթացիկ ընկալումները: 	Շահագրգիռ կողմերի վերլուծության եւ տեղեկատվական աղբյուրների քարտեզագրում		ՀԿՏՎ			<p>Շահագրգիռ կողմերի տեղեկատվական աղբյուրների խորությամբ ընկալումը ԿԳՆ-ին հնարավորություն կտա պլանավորել համապատասխան շահագրգիռ խմբին ուղղված հաղորդակցություն ըստ տվյալ խնդրի:</p> <p>Կրթական ծառայությունների ժողովրդականության վերաբերյալ տեղեկացվածությունը կնպաստի քաղաքականության մշակման գործընթացին եւ ԿԳՆ-ին հնարավորություն կընձեռի գերակա դարձնել կարեւոր ծառայությունները եւ նվազեցնել պակաս ժողովրդականություն վայելողների մասշտաբը:</p> <p>ԿԳՆ վերաբերյալ ներկայումս առկա ընկալումների որակական վերլուծությունը կտրամադրի բազային տվյալներ (մեկնակետ), որի համեմատությամբ կգնահատվի նախարարության հեղինակության (բրենդի) վերականգնումը:</p>
Հանրային բաց քննարկումներ [town hall meetings] տեղական/մարզային մակարդակներում.	Դեմ առ դեմ շփումներ		ՀԿՏՎ			Խրախուսել հանրության մասնակցությունը եւ արձագանքները. ներկայացնել

<ul style="list-style-type: none"> • Կայացնել համաձայնություն առ այն, թե ինչպես պետք է գրանցվեն քննարկումների ընթացքում հնչած տեսակետները եւ ինչպես պետք է արձագանքել դրանց, • Մշակել ժամանակացույց մարզային եւ համայնքային պաշտոնյաների մասնակցությամբ, • Մասնագետներին եւ քաղաքականությանն առնչվող շահերի պաշտպաններին ծանոթացնել գործի էությանը, • Անցկացնել հանրային բաց քննարկումներ: 					<p>առկա մեխանիզմները:</p> <p>Լրագրողների ոչ ֆորմալ մասնակցություն, սակայն ուշադրության առանցքում պետք է լինի հանրության հետ շփումը:</p> <p>Ֆոկուս խմբերի ձևաչափ:</p>
<p>Աշխատաժողովներ լրագրողների համար, ներառյալ՝ հետեւյալ թեմաներով.</p> <ul style="list-style-type: none"> • Մարդկային զարգացմանը դիմագրավող մարտահրավերները, • Նախարարության առաջիկա տարվա օրակարգի ընդհանուր պատկերը, • Կրթության հատվածում առկա մարտահրավերների վերլուծություն, • Նախարարության ծրագրի եւ քաղաքականության օրակարգի վերաբերյալ ընդհանուր պատկերացում, • Լրատվամիջոցների համար նախատեսված փաթեթներ, որոնք կպարունակեն հիմնական տեղեկություններ, պատասխաններ հաճախակի տրվող հարցերին, առաջիկա տարում նապատեսվող իրադարձությունները, պրեզենտացիաների ամփոփագրերը եւ նյութերի որոշ գաղափարներ/ ավարտուն քարոզչական արտադրանք: 	<p>Աշխատաժողովներ լրագրողների համար</p>		<p>ԿԳ նախարար; աշխատակազմի ղեկավար, վարչությունների պետեր, ՀԿՏՎ, մամուլի քարտուղար</p>		<p>Աշխատաժողովները նախատեսված են Հայաստանի կրթական ոլորտը լուսաբանող լրագրողների մասնագիտացման մակարդակը բարձրացնելու համար:</p> <p>Աշխատաժողովները նաեւ վստահության մթնոլորտ կձևավորեն՝ լրագրողների եւ նախարարության պաշտոնյաների միջեւ փոխհարաբերություններ հաստատելու միջոցով:</p> <p>Աշխատաժողովների ուշադրության առանցքում պետք է լինի այն, թե ինչպես են նախարարության ծրագրերն ու քաղաքականությունները դիմագրավում կրթության ոլորտում առկա մարտահրավերները:</p>

<p>Լրագրողների այցելություններ տեղերում հաջող փորձնական նախաձեռնությունների իրականացման վայրեր.</p> <ul style="list-style-type: none"> • Փորձնական նախաձեռնություն, որը համահունչ է նախարարության որոշված ուղերձին, • Նախապատրաստական հանդիպումներ իրականացվող փորձնական ծրագրում ներգրավված շահագրգիռ կողմերի հետ, • Լրատվամիջոցների մոբիլիզացում եւ տեղային այցելությունների իրականացում: 	<p>Լրագրողների այցելություններ տեղերում իրականացվող ծրագրերի վայրեր</p>		<p>ՀԿՏՎ</p>		<p>Լրագրողների այցելությունները կներկայացնեն նախարարության բարեփոխումներն իրական կյանքում՝ այդպիսով լրագրողներին ապահովելով մատչելի եւ հետաքրքիր նյութով: Նախաձեռնություններում ներգրավված շահագրգիռ կողմերը պետք է խրախուսվեն՝ հաջողությունների ներկայացման հարցում առաջնորդող լինելու:</p> <p>Նախարարության մասնագետները պետք է ներկա լինեն անմիջական քննարկումներին եւ տրամադրեն հավելյալ տեղեկություններ:</p>
<p>Լրագրողական մրցանակներ՝</p> <ul style="list-style-type: none"> • Տեխնիկական առաջադրանքը մշակում, • Գործընկեր կազմակերպության որոշում, • Գնահատման օբյեկտիվ չափանիշների մշակում, • Մրցանակների հրապարակում, • Գնահատման չափանիշների հրապարակում ԿԳՆ վեբկայքում, • Հանձնված աշխատանքների գնահատում, • Մրցանակների հանձնման արարողության անցկացում: 	<p>Լրագրողական մրցանակներ</p>		<p>ՀԿՏՎ</p>		<p>Լրագրողական մրցանակները հավելյալ կերպով կնպաստեն նախարարության եւ լրատվամիջոցների փոխհարաբերությունների կառուցմանը եւ կխրախուսեն կրթական ոլորտի խնդիրների հավասարակշռված լուսաբանումը:</p> <p>Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կամ զարգացման հարցերով զբաղվող միջազգային գործակալությունների հետ գործընկերությունը կարող է էապես մեծացնել նման մրցանակաբաշխությունների թափանցիկության ընկալումը:</p>

<p>Ստեղծել եւ թարմացնել ԿԳՆ-ի էջերը հետևյալ վեբ-կայքերում.</p> <ul style="list-style-type: none"> • Odnoklassniki.ru, • Facebook.com, • V Kontakte.ru, • Hayland.am: 	<p>ԿԳՆ-ի ներկայություն ինտերնետային սոցիալական ցանցերում</p>		<p>ՀԿՏՎ</p>		<p>Համացանցի մատչելիության ցուցանիշները տատանվում են 4-ից 47 տոկոսի¹ սահմաններում. այդուհանդերձ, անվիճարկելի է, որ համացանցի օգտագործման ծավալները մեծանում են:</p> <p>ԿԳՆ ներկայությունը ինտերնետային սոցիալական ցանցերում շահագրգիռ կողմերի, հատկապես դպրոցականների եւ ուսանողների հետ հաղորդակցության ուղղակի ճանապարհ է:</p>
<p>Նպաստել «Հայկական կրթական միջավայր» պորտալի արդյունավետության աստիճանը.</p> <ul style="list-style-type: none"> • ՀԿՏՎ աշխատակիցների պարբերական մասնակցություն ինտերնետային ֆորումներում ընթացող քննարկումներին, • ԿԳՆ տեղեկատվական նյութերի վերբեռնում «Հայկական կրթական միջավայր» պորտալի պաշարներում, ներառյալ՝ <ul style="list-style-type: none"> ○ «Կրթություն» շաբաթաթերթ, ○ ԿԳՆ ձեռնարկներ, ուղեցույցներ եւ տեղեկատվական թերթիկներ: • Ինտերնետային հղումներ “youtube” –ի կրթական ալիքներին: 	<p>ՀԿՏՎ-ի ներկայություն «Հայկական կրթական միջավայր» ֆորումում</p> <p>Հաղորդակցական նյութերի արխիվի հարստացում</p>		<p>ՀԿՏՎ</p>		<p>«Հայկական կրթական միջավայր» ֆորումը մեծամասամբ օգտագործվում է ուսուցիչների եւ ուսանողների կողմից. այդպիսով այն հաղորդակցության ուղղակի ուղի է հանդիսանում շահագրգիռ այս խմբերը ներկայացնող ակտիվ եւ շահագրգիռ ներկայացուցիչների համար:</p> <p>Շահագրգիռ կողմերի հետ նմանօրինակ շփումները շարունակելով՝ ԿԳՆ-ն կխրախուսի նրանց մասնակցությունը քաղաքականությունների մշակման եւ գնահատման գործընթացին:</p>

¹ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, մեջբերված է internetworldstats.com վեբկայքից:

Հավելված Բ. Մասնագիտական եւ ինստիտուցիոնալ զարգացման պլան

Ուսուցման թեմա	Հիմնական արդյունքներ	Ժամանակացույց	Պատասխանատու անձ (անձինք)	Արժեքը (\$)	Գործընկերներ	Մեկնաբանություն
Ռազմավարական հաղորդակցություն	<ul style="list-style-type: none"> Ուսուցում ռազմավարական հաղորդակցության թեմայով Հաղորդակցության ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր ծրագրի պարբերաշրջանում 	Ենթակա է որոշման	ՀԿՏՎ, Հրավիրյալ փորձագետ			<p>Այս գործողությունը պետք է իրականացվի նախքան հաղորդակցության վերաբերյալ ընթացակարգի մշակումը:</p> <p>Այս գործողության թիրախային խումբը ծրագրի կամ նախագծի մշակման համար պատասխանատու անձինք եւ համապատասխան վարչությունների պետերն են:</p>
Փոփոխությունների կառավարում	<ul style="list-style-type: none"> Ուսուցում փոփոխությունների կառավարման թեմայով 	Ենթակա է որոշման	Հրավիրյալ փորձագետ			<p>Այս գործողության առանցքը բարեփոխումների գործընթացում հաղորդակցությանը նպաստելն է:</p> <p>Ուսուցման թեման ԿԳՆ հաղորդակցության ռազմավարությունը եւ գործողությունների ծրագիրն է. քննարկվելու է կոնկրետ բարեփոխումներին եւ նախաձեռնություններին աջակցելու եղանակը:</p> <p>Ուսուցման ընթացքում նաեւ կքննարկվեն ռիսկերն ու բարեփոխման գործընթացի ընդհանուր խոչընդոտները:</p>

Մոնիտորինգ եւ գնահատում	<ul style="list-style-type: none"> • Ուսուցում հաղորդակցության մոնիտորինգ եւ գնահատում իրականացնելու վերաբերյալ • Ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր՝ նախարարության հաղորդակցության մոնիտորինգն ու գնահատումն իրականացնելու համար 	Ենթակա է որոշման	Հրավիրյալ փորձագետ			<p>Ուսուցման հիմք կհանդիսանան Ռազմավարությունը եւ իրականացման աշխատանքների ծրագիրը:</p> <p>Այս գործողության շրջանակում հետագա պարբերաշրջանների համար կմշակվի ՄեԳ գործողությունների ծրագիր, ինչպես նաեւ ՄեԳ համակարգ՝ հետագա հաղորդակցության պարբերաշրջանների համար:</p> <p>Կառավարման համակարգի մաս կկազմեն ստանդարտ աշխատանքային ընթացակարգերը: Դրանց միջոցով կգարգացվեն ինստիտուցիոնալ կարողությունները:</p>
Հարաբերություններ ԶԼՄ-ների հետ	<ul style="list-style-type: none"> • Ուսուցման կոնկրետ կարիքների մասին ուսուցանողներին տեղեկացնող հակիրճ բացատրական ծանոթություն • Ուսուցում՝ մամուլի հետ հարաբերությունների թեմայով • Ստանդարտ աշխատանքային ընթացակարգեր՝ լրատվամիջոցների հետ 	Ենթակա է որոշման	ՀԿՏՎ, մամուլի քարտուղար, Հրավիրյալ փորձագետ,			<p>Ուսուցում՝ մամուլի հետ հարաբերությունների, ճգնաժամային հաղորդակցության եւ հեղինակության կառավարման թեմաներով Այս գործողության թիրախային խումբը նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներն են, որոնք ի պաշտոնե պարբերաբար շփվում են լրատվամիջոցների</p>

	հարաբերությունների մասով					հետ: Ուսուցումը կարելի է անցկացնել կոնկրետ մամուլի միջոցառման նախապատրաստվելիս:
Հեռուստատեսային եւ ռադիո հաղորդումների արտադրություն	<ul style="list-style-type: none"> • Ուսուցում՝ հեռուստատեսային եւ ռադիո հաղորդումների արտադրության վերաբերյալ 	Ենթակա է որոշման	Գործընկերներ լրատվամիջոցներից		Հանրային հեռուստատեսություն եւ ռադիո	Այս գործողության միջոցով ՀԿՏՎ-ում կզարգացվեն արտաքին շփումների երկու փորձնական միջոցառումներ իրականացնելու կարողություններ: Հնարավոր է իրականացվի գործընկեր լրատվամիջոցի կողմից:
Անգլերեն լեզվի դասընթացներ	<ul style="list-style-type: none"> • Անգլերեն լեզվի դասընթացներ 	Ենթակա է որոշման	Հրավիրյալ փորձագետ			Այս գործողությունն ավելացվել է ՀԿՏՎ-ի խնդրանքով: Դասընթացներն անհրաժեշտ են ԿԳՆ-ի ինտրնետային կայքի օտարալեզու էջերի զարգացմանն աջակցելու համար: